ՍՈՒՐԵՆ Շ. ՎԱՆԵՑԻ

# ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 1908-1988

*ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒ-ԹՅԱՆ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳ ԱՄՅԱԿԻՆ*

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Բուխարեստում (Ռումինիա) ծնվեց Կարապետ Աբրահամի Պալճյանը (հետագայում Նորին Սուրբ Օծություն, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգեն Ա)։ Հայրը՝ Աբրահամ Կարապետի Պալճյան, մասնագիտությամբ կոշկակար, մայրը՝ Սիրանույշ Մարգարի Պալճյան (մինչև ամուսնությունը՝ Մարգարյան) ուսուցչուհի։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23. – Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» հայկական եկեղեցում, Հարություն քահանա Սարգսյանի ձեռքով, կատարվում է Կարապետ Պալճյանի մկրտությունը։ Մկրտվողին տրվում է նաև երկրորդ՝ «Լևոն» անունը։

## 1916

ՁՄԵՌ. – Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով, Աբրահամ և Սիրանույշ Պալճյանները իրենց որդու հետ միասին, ի թիվս Ռումինահայ բազմաթիվ ընտանիքների, դուրս են գալիս Բուխարեստից և ժամանակավորապես հաստատվում են Օդեսայում (Ռուսաստան)։

## 1917

ՍԿԻԶԲ. – Օդեսայում, Լևոն Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել արձակագիր Արմեն Շիտանյանի տնօրինության ներքո գտնվող հայկական նախակրթական ամառային դասընթացները։ Տանը, մասնավոր կարգով, նրան դասեր էր տալիս ուսուցիչ և մտավորական Աշոտ Սպանդարյանը։

**1919**

ԳԱՐՈՒՆ. – Պատերազմի ավարտին, Պալճյանների ընտանիքը թողնելով Օդեսան, վերադառնում է Ռումինիա և վերահաստատվում Բուխարեստում։

**1920**

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Լևոն-Կարապետ Պալճյանը ընդունվում է գերմանական նախակրթարան «Էվանգելիշե շուլե» («Evangelishe Schule») չորրորդ դասարանը։ Այստեղ սովորում է չորս տարի։

**1922**

--- Գործուն մասնակցություն է ունենում «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության» («Հ.Մ.Ը.Մ.») սկաուտական կազմակերպության և այլ մշակութային կազմակերպությունների աշխատանքներին, մինչև 1936 թվականը։

**1924**

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Սկսում է հաճախել Բուխարեստի «Առևտրական բարձրագույն վարժարանը»։ ՈՒսումնառությունը տևում է չորս տարի։

**1929**

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Աշխատանքի է անցնում Բուխարեստի հայկական «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարանում, որպես օգնական ուսուցիչ և քարտուղար։

**1932**

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – ՈՒսանող է արձանագրվում Բուխարեստի Պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում, իբրև գլխավոր առարկաներ ընտրելով մանկավարժությունը, հոգեբանությունը և ընկերային գիտությունները։

## 1933

ՄԱՐՏԻ 10. – Փարիզում հրատարակվող «Մարտկոց» օրաթերթում (№ 73), հրատարակում է իր առաջին՝ «Նոր սերունդին համար» հոդվածը, «Կ. Պալճյան» ստորագրությամբ։ Ապա հաջորդում են «Հայուն պայքարը» (Անդ, № 83, ապրիլի 12), «Մեր ապագան» (Անդ, № 94, մայիսի 10), «Նոր սերունդի խնդիրը» (Անդ, № 109, օգոստոսի 13) հոդվածները։ Գրական-հրապարակախոսական գործունեության սկիզբը։

## 1936

ՍԿԻԶԲ. – Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում, տեղի է ունենում «Հայ ուսանողների միության» հերթական նիստը, որտեղ «Ֆրանց Վերֆելը և նրա «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպը» թեմայով զեկուցումով հանդես է գալիս Լևոն-Կարապետ Պալճյանը։

ՄԻՆՉԵՎ ԿԵՍԵՐԸ. – Համալսարանական ուսումնառությանը զուգընթաց, սկսում է գրաբարի մասնավոր դասեր անցնել պոլսահայ մտավորական Հակոբ Սիրունու մոտ։

ՓԵՏՐՎԱՐ. – Պաշտպանելով «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» խորագրով իր ավարտաշարադրանքը, ավարտում է Պետական համալսարանը, ստանալով ուսուցիչ-մանկավարժի վկայական։

ՄԱՐՏ. – Սկսում է հաճախել Բուխարեստի Պետական համալսարանին կից՝ Տիտու Մայորեսկուի անվան փորձառական մանկավարժական ինստիտուտը, որն ավարտում է մեկ տարվա ընթացքում, ստանալով վկայական։

## 1937

ՀՈՒՆԻՍ. – Բուխարեստում, Լևոն-Կարապետ Պալճյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հերկ» մշակութային և հասարակագիտական ամսագիրը, որտեղ նա հանդես է եկել բազմաթիվ խմբագրականներով։ Տասներկու համարից հետո, 1938 թ. մայիսին, «Հարկը» դադարում է։

## 1938

ՀՈԿՏԵՄԲԵՐ. – Բուխարեստում հրատարակվող «Գաղութահայ տարեգրքում» (խմբ. Հայր Մ. Պոտուրյան), լույս է տեսնում «Անձնավորության գաղափարի մասին (մտածումներ)» պատմա-փիլիսոփայական ուսումնասիրությունը «Կ. Պալճյան» ստորագրությամբ։ Նույնը անփոփոխ՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածվում (Էջմիածին, 1988, էջ 15-31)։

## 1940

--- Բուխարեստում, հրատարակվում է Կարապետ Պալճյանի «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)» ուսումնասիրությունը։ 62 էջ։ Նույնը՝ Մ. Դարբինյան-Մելիքյանի ռուսերեն համառոտ թարգմանությամբ «Дружба народов», 1987, № 8-ում, ֆրանսերեն առանձին գրքով, Փարիզ, 1987, 43 էջ։ Նույնը հեղինակային որոշ շտկումներով՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուում (Էջմիածին, 1988, էջ 35-73)։

## 1941

ՎԵՐՋԵՐ. – Ֆաշիստական Ռումինիա են բերվում խորհրդային ռազմագերիների առաջին խմբերը։ Նրանք տեղավորվում են Կալաֆաթի, Տիմիշոարայի, Ինդեպենդենցիայի և Սլոբոզիայի համակենտրոնացման ճամբարներում։

## 1942

ՍԿԻԶԲ. – Բուխարեստի հայկական համայնքի նախաձեռնությամբ, ստեղծվում է Ռումինիայում գտնվող հայ ռազմագերիներին օգնող կոմիտե, որի կազմում ընդգրկված էր նաև Լևոն-Կարապետ Պալճյանը։ Կոմիտեն գոյություն ունեցավ մինչև 1944 թ. օգոստոսի 23-ը։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23. – Ռումինահայ թեմի առաջնորդ Հուսիկ Արքեպիսկոպոս Զոհրապյանի մահը Բուխարեստում (ծնվ. 1871 թ. Նոր-Նախիջևանի Մեծ Սալա գյուղում)։

## 1943

ԿԵՍԵՐ. – Հոգևորական գործունեության անցնելու նպատակով, Լևոն-Կարապետ Պալճյանը ազատվում է Բուխարեստի «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարանի ուսուցչի պարտականություններից։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Ռումինահայ թեմական խորհրդի առաջադրանքով, ռումինահայ թեմական խորհրդի անդամ Ռուբեն Իսրայելյանի կնքահայրությամբ ուղևորվում է Աթենք, ընկերակցությամբ Բուխարեստի հայոց եկեղեցու ավագերեց Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի, հոգևորական կոչում ստանալու համար։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-30. – Աթենքում, Տուրղուդի Ֆիքսի թաղի հայոց «Սուրբ Կարապետ» եկեղեցում հունահայ թեմի առաջնորդ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմյանի ձեռքով կատարվում է Լևոն-Կարապետ Պալճյանի կուսակրոն քահանայության ձեռնադրությունը, վերանվանվելով **Տեր Վազգեն**։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16. – Սուչավայում (Հյուս. Ռումինիա), «Սուրբ Հաճկատար» հայկական վանքում, նորընծա վարդապետն անց է կացնում իր կանոնական քառասունքը, որը տևում է մինչև նոյեմբերի 25-ը։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28. – Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում, «ծովածավալ բազմության առջև» Տ. Վազգեն Վարդապետը մատուցում է իր անդրանիկ պատարագը, բնաբան ունենալով «Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս...»։ ՆՈՒՅՆ ՕՐԸ, հետ պատարագի, Բուխարեստի հայոց թեմական պատգամավորական ժողովը Վազգեն վարդապետ Պալճյանին ընտրում է թեմի առաջնորդական տեղապահ։ Դեկտեմբերի 21-ին, այդ ընտրությունը վավերացնում է Ռումինական կառավարությունը։

ՆՈՅԵՄԲԵՐ. – Աստվածաբանական գիտելիքները խորացնելու նպատակով, ուսանող է արձանագրվում Բուխարեստի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետում։ ՈՒսումնառությունը տևում է երկու տարի։

ՏԱՐԵՎԵՐՋ. – Բուխարեստում, արևմտահայերեն, հրատարակվում է Կարապետ Պալճյանի «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» տեսական-մանկավարժական

աշխատությունը։ 155 էջ։ Նույնն անփոփոխ՝ Նյու Յորք, 1987 թ., նույնը՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածվում (Էջմիածին, 1988, էջ 77-188)։

**1944**

ՕԳՈՍՏՈՍԻ 23. – ՈՒկրաինական երկրորդ ռազմաճակատի զորամասերը, Ռումինական առաջին կամավորական դիվիզիայի հետ մեկտեղ, մտնում են Բուխարեստ։ Ռումինիան ազատվում է ֆաշիզմի լծից։

**1945**

ՀՈՒՆԻՍԻ 6. – Առաջին այցելությունը հայրենիք, որպես թեմի պատվիրակության ղեկավար, Տ.Տ. Գեորգ կաթողիկոս Չորեքչյանի ընտրության և օծման առթիվ։ ՀՈՒՆԻՍԻ 10-ին, Մայր Աթոռում ընդունելություն Կաթողիկոս Գեորգ Չորեքչյանի մոտ։ ՀՈՒՆԻՍԻ 26-ին, Երևանում ընդունելություն Հայկական Խորհրդային Հանրապետության Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Սահակ Կարապետյանի մոտ։ Եռանդուն մասնակցություն Համազգային-Եկեղեցական ժողովի աշխատանքներին։ Վերադարձ Բուխարեստ՝ ՀՈՒԼԻՍԻ 5-ին։

--- Բուխարեստում հրատարակվում է Վազգեն վարդապետ Պալճյանի «Մեր պատարագը» կրոնագիտական աշխատությունը։ 104 էջ։ Նույնն անփոփոխ՝ Էջմիածին, 1988 թ.։

--- Բուխարեստում հրատարակվում է Վազգեն վարդապետ Պալճյանի «Խոսք հայրենիքի մասին (ամփոփում Պուքրեշի եկեղեցվո մեջ և հրապարակային ժողովներու առթիվ արտասանված քարոզներու)» գրական-հրապարակախոսական աշխատությունը։ 27 էջ։ Նույնն անփոփոխ՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածվում (Էջմիածին, 1988, էջ 252-262)։

**1947**

ՀՈՒՆԻՍԻ 8. – Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի սրբազանի այցելությունը Բուխարեստի հայկական «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցին։ Բազմահարյուր հայերի ներկայությամբ բարձրաստիճան հյուրին ընդունում և բարի

գալուստի խոսքով դիմավորում է թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն Պալճյանը։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12. – Ռումինահայ թեմի նախագահ Վահան Դանիելյանի և թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն Պալճյանի հեռագիրը Պարսկաստանի վարչապետ Կավամ Սալթանեհին, իրանահայության ներգաղթը Խորհրդային Հայաստան արգելելու մասին։ Հոկտեմբերի 23-ի իր պատասխան հեռագրում վարչապետը տեղեկացնում է, որ հարցը կարգադրված է։

**1948**

ՄԱՅԻՍԻ 20. – Այցելություն Խորհրդային Հայաստան։ ՄԱՅԻՍԻ 21-ին՝ ընդունելություն Տ.Տ. Գեորգ Զ Կաթողիկոս Չորեքչյանի մոտ։ ՄԱՅԻՍԻ 23-ին, Մայր Տաճարում, հավարտ պատարագի, Ծայրագույն վարդապետության տասը աստիճանների տվչություն Կաթողիկոսի ձեռքով։ Մեկնում Երևանից հունիսի 6-ին։

ՀՈՒԼԻՍԻ 25. – Ռումինահայ թեմական պատգամավորական ժողովը, միաձայնությամբ, Վազգեն Ծայրագույն վարդապետ Պալճյանին ընտրում է թեմի առաջնորդ։ Ռումինական կառավարությունն ընտրությունը վավերացնում է նոյեմբերի 27-ին, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գեորգ Զ. Չորեքչյանն իր սրբատառ կոնդակով՝ դեկտեմբերի 15-ին։

**1950**

ԱՊՐԻԼԻ 23. – Ռումինահայ թեմի առաջնորդ Վազգեն Ծայրագույն վարդապետ Պալճյանի հրամանի համաձայն, թեմի բոլոր հայկական եկեղեցիներում տեղի է ունենում հոգեհանգստի հանդիսավոր արարողություն, նվիրված 1915 թ. Ապրիլյան զոհերի հիշատակին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 16. – Այլ դավանությունների համայնքների առաջնորդների հետ, Բուխարեստում, ստորագրում է Աշխարհի խաղաղության պաշտպանության ուղերձը, որն ուղարկվում է Վարշավայի՝ Խաղաղության կողմնակիցների երկրորդ կոնգրեսին։

## 1951

ՄԱՐՏԻ 4. - Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում, հայ և ռումին բարձրաստիճան հյուրերի, պետության ականավոր գործիչների և բազում հավատացյալների ներկայությամբ, տեղի է ունենում հանդիսավոր Պատարագ և հոգեհանգստի արարողություն, նվիրված Վարդանանց հերոսամարտի և Ղևոնդյանց նահատակության 1500-ամյակին։ Հավուր պատշաճի քարոզով (սկզբում՝ ռումիներեն) հանդես է գալիս թեմի առաջնորդը։

ՄԱՅԻՍԻ 20. – Այցելություն Մայր Հայրենիք։ ՀՈՒԼԻՍԻ 8-ին, Էջմիածնի Մայր Տաճարում, Տ.Տ. Գեորգ Չորեքչյանը «Իր Հայրապետական օրհնաձիր աջով» եպիսկոպոս է ձեռնադրում Տ. Վազգեն Ծայրագույն վարդապետին։ Այցելություններ Երևանի թատերական-երգարվեստային կենտրոններ, ծանոթություններ Դերենիկ Դեմիրճյանի, Էդուարդ Թոփչյանի, Հրաչյա Գրիգորյանի, Սարմենի, Հրաչյա Հովհաննիսյանի, Ավետիք Իսահակյանի և այլոց հետ։ Մեկնում Երևանից՝ ՕԳՈՍՏՈՍԻ 8-ին։

ՕԳՈՍՏՈՍԻ 14. – Բուխարեստի «Հայ մշակույթի տան» դահլիճում, հանդես է գալիս երկու ժամ տևող զեկուցումով Խորհրդային Հայաստանի մասին։ Նույնը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27.-ին, քաղաքի «Ստեփան Շահումյան» ակումբում, նույնը՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ին, «ԱՌԼՈՒՍԻ» մշակութային տանը։

## 1952

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7. – Ընտրվում է Ռումինական Ժողովրդական Հանրապետության Խաղաղության պաշտպանության մշտական կոմիտեի անդամ և պարգևատրվում է «Ռումինիո աստղ» շքանշանով։

## 1953

ՄԱՅԻՍԻ 22. – Չորրորդ այցելությունը Մայր Հայրենիք և Սուրբ Էջմիածին։ Մեկնում Երևանից Մոսկվա ՀՈՒԼԻՍԻ 1-ին։ ՀՈՒԼԻՍԻ 25-ին, Մոսկվայում, պաշտոնական այցելություն Ռուսական պրավոսլավ եկեղեցու առաջնորդ Ալեքսի

պատրիարքին, ՕԳՈՍՏՈՍԻ 1-ին՝ Եկեղեցական գործերի կոմիտեի նախագահ Ի.Վ. Պոլյանսկուն։ Մեկնում Մոսկվայից Բուխարեստ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22. – Բուխարեստում, «Հայ մշակույթի տան» դահլիճում, հանդես է գալիս ընդարձակ դասախոսությամբ «ռումին, ռուս և հայ եկեղեցիների գործակցությունը Խաղաղության պայքարի մեջ» թեմայով։

**1954**

ՄԱՅԻՍԻ 9. – Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գեորգ Զ. Չորեքչյանը։ Ծնվ. 1868 թ. նոյեմբերի 2-ին, Նոր-Նախիջևանում, Ամենայն Հայոց Կաթողիկոս էր ընտրվել 1945 թ. հունիսի 22-ին։

ՄԱՅԻՍԻ 23. - Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ժամանում է Երևան, վախճանյալ կաթողիկոսի հուղարկավորությանը մասնակցելու համար։ ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ, հանդես է գալիս «Հայ եկեղեցվո անփոխարինելի կորուստը» դամբանականով և ՀՈՒՆԻՍԻՆ՝ ռադիոելույթով Երևանից։ Մեկնում՝ ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՆ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18. – Հրավիրվում է Երևան, Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին մասնակցելու համար։ Հովվական այցելություն Լենինականի, Թբիլիսիի, Բաքվի և Կիրովաբադի հայոց եկեղեցիներին, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի դահլիճում հանդես է գալիս հրապարակային դասախոսությամբ «Կրոն և գիտություն» թեմայով։ Մեկնում Երևանից՝ 1955 թ. փետրվարի 26-ին։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31. – Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, Վազգեն եպիսկոպոսը ստանձնում է նաև Բուլղարահայ թեմի առաջնորդի պարտականությունը։

--- Բուխարեստում, հրատարակվում է Վազգեն եպիսկոպոս Պալճյանի «Հայրենի արևին տակ» ուղեգրական աշխատությունը։ 112 էջ։ Նույնը անփոփոխ՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածվում (Էջմիածին, 1988, էջ 289-301)։

## 1955

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23. – Երևան է ժամանում Ռումինահայ և Բուլղարահայ թեմերի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, մասնակցելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության՝ Ազգային-Եկեղեցական ժողովի աշխատանքներին։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ին, ընդունելություն Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերության վարչության նախագահ Բաբկեն Աստվածատրյանի մոտ։

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30. – Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստում, քվեից առավելությամբ (125 կողմ։ Մյուս թեկնածուն, Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը ստացել էր 6 կողմ) Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ընտրվում է Հայոց Կաթողիկոս։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-15. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի ընտրությունը շնորհավորող հեռագրեր Ի.Վ. Պոլյանսկուց (Խորհրդային Միության՝ Կրոնից Խորհրդի նախագահ), Հր. Գրիգորյանից (Հայկական Հանրապետության կառավարության անունից), Պետրու Գրոզայից (Ռումինական Հանրապետության՝ Ազգային Ժողովի նախագահ), Ռումինիայի պատրիարք Ժուստինիանից, Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիից, Համայն վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկից, Համայն Անգլիո եպիսկոպոսապետ Ջեոֆրիից, Բուլղարիայի պատրիարք Կիրիլից, Անդրկովկասի Մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ ՈՒլ-Իսլամ Ակիմովից և ուրիշներից։

ՀՈԿՏԵՄԲԵՐ. – Ռումինահայ «Օրթոդոքսիա» ամսագիրը հրատարակում է Վազգեն Կաթողիկոս Պալճյանի «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը» (¨Viata si opera sfintulut Grigore din Nareg¨) ռումիներեն ուսումնասիրությունը, և «Մատեան ողբերգութեան» պոեմի վեց գլուխների՝ գրաբարից կատարված ռումիներեն թարգմանությունը։ ՈՒսումնասիրությունը արևելահայերեն թարգմանությամբ (թարգ. Ս. Ժամկոչյան)՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածվում (Էջմիածին, 1988, էջ 191-209)։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6. – Ս.Էջմիածնի Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ն, կատարում է իր առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունները։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի անդրանիկ Կոնդակը՝ համազգային-եկեղեցական վերակառուցում սկսելու և հոգևոր-մշակութային կյանքին զարկ տալու մասին։

**1956**

ՀՈՒՆՎԱՐԻ 6. – Մայր Աթոռ է ժամանում հնդիկ ականավոր գրող, Խաղաղության Համաշխարհային խորհրդի անդամ Կրիշնան Չանդրը և արժանանում Հայրապետական ընդունելության։

ՓԵՏՐՎԱՐԻ 1. – ՈՒղևորություն արտասահման, մասնակցելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը։ ՓԵՏՐՎԱՐԻ 13-ին, Բեյրութում, Հայրապետական այցելություն Լիբանանի Հանրապետության նախագահ պ. Քամիլ Շամունին, ՓԵՏՐՎԱՐԻ 14-21-ին, Անթիլիասում, մասնակցություն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության աշխատանքներին։ ՓԵՏՐՎԱՐԻ 29-ին, Կահիրեում, տեսակցություն Եգիպտոսի հանրապետության նախագահ Գամալ Աբդել Նասերի հետ։ Ապա ուղևորություն Հռոմ, Միլան, Վենետիկ, հանդիպումներ տեղի հայության հետ։ ՄԱՐՏԻ 29-ին, ուղևորություն Փարիզ, ԱՊՐԻԼԻ 5-ին, այցելություն Ֆրանսիական հանրապետության արտաքին գործերի մինիստր Քրիստիան Պինոյին, ՄԱՅԻՍԻ 2-ին, Հանրապետության նախագահ Ռընե Կոտիին։ ՄԱՅԻՍԻ 5-ին, վերադարձ Մոսկվա, ՄԱՅԻՍԻ 12-ին, Մոսկվայում վաթսուն րոպե տևող պաշտոնական ընդունելություն ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն.Ա. Բուլգանինի մոտ, որին ներկայացվում է յոթ կետից բաղկացած հուշագիր Մայր Աթոռի եկեղեցական գործունեության վերաբերյալ և մի այլ հուշագիր՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը միացնելու առաջադրանքով։ Ժամանում Մայր Աթոռ՝ ՄԱՅԻՍԻ 19-ին։

ՄԱՐՏԻ 5. – Կահիրեում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Կահիրեի եպիսկոպոսական ժողովը, որը քննարկում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրության հարցը։ ՄԱՐՏԻ 8-ին, Վեհափառ Հայրապետի փակման խոսքով ժողովն ավարտում է իր աշխատանքները։

## 1957

ՀՈՒՆՎԱՐԻ 14. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակը «Համայն հայ հոգևորականության»։ Նշում է այն արժանիքներն ու ներքին նկարագրի դրսևորման սկզբունքները, որով պետք է օժտված լինեն հայ եկեղեցու սպասավորները։

ՀՈՒՆՎԱՐԻ 23. – Ի կատարումն ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն.Ա. Բուլգանինի կարգադրության, Ս. Էջմիածնի Վեհարանի նոր շենքը, կառուցված 1914-ին արդյամբ Ալեքսանդր Մանթաշյանի (67 դահլիճ և սենյակ, շուրջ 1920 քառ. մետր օգտագործելի տարածություն) հանձնվում է ի տնօրինություն Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի։

ՄԱՅԻՍԻ 17. – Հովվապետական այցելություն Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի հայկական եկեղեցիներին։ Վերադարձ՝ ՄԱՅԻՍԻ 21-ին։

ՀՈՒԼԻՍԻ 5. – Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Մելքիսեդեկ Գ.-ի հրավերով՝ այցելություն Թբիլիսի, ՀՈՒԼԻՍԻ 6-ին, Հայրապետական ողջույնի խոսք Թբիլիսիի «Ս. Սիոն» եկեղեցում։ Վերադարձ՝ ՀՈՒԼԻՍԻ 11-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Հովվապետական այցելություն Ադրբեջանի հայկական թեմին։ ՆՈՒՅՆ ՕՐԸ, Հայրապետական ելույթ Բաքվի հայկական առաջնորդանիստ եկեղեցում, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ին, Հայրապետական քարոզ։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ին, այցելություն Կիրովաբադ և ելույթ քաղաքի հայկական եկեղեցում, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ին, ուղևորություն Ստեփանակերտ և Շուշի, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ին Գանձասարի և ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ին, Ամարասի հայկական վանքերը։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ.-ի և Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի համատեղ խաղաղության կոչը պատերազմները կանխելու, ատոմային և ջրածնային զենքը արգելելու մասին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18. – Ցավակցական հեռագիր հայ գրականության դասական, ակադեմիկոս, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր Ավետիք Սահակի Իսահակյանի մահվան առթիվ։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ին, մեկնում Երևան, և այցելություն վարպետի աճյունին, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ին, հանդիսավոր պատարագ Մայր Տաճարում, ի հանգիստ հոգվո հանգուցյալի։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 22. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի հեռագիրը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասլյանին։ Իր վրդովմունքն է հայտնում ամերիկահայ էջմիածնական թեմի մի շարք եկեղեցիներ Կիլիկիայի Աթոռի իշխանության ներքո առնելու փորձերի վերաբերյալ։

**1958**

ՄԱՐՏԻ 11. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական հեռագիրը Կահիրե, Միացյալ Արաբական Հանրապետության նախագահ Գամալ Աբդել Նասերին, Հանրապետության նախագահ ընտրվելու առթիվ։

ՄԱՅԻՍԻ 9. – Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի հրավերով, ուղևորություն Մոսկվա, ռուսական Պրավոսլավ Եկեղեցու պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար։ ՄԱՅԻՍԻ 13-ին, Հայրապետական ելույթ Զագորսկում։ Վերադարձ՝ ՄԱՅԻՍԻ 22-ին։

ՄԱՅԻՍԻ 24. – Մայր Աթոռ են ժամանում Բուլղարիայի Պատրիարք, Նորին Սրբություն Կիրիլը և Ռումինիայի Պատրիարք, Նորին Սրբություն Ժուստինիանը, իբրև հյուրերը Վազգեն Ա. Կաթողիկոսի։ Մեկնում՝ ՄԱՅԻՍԻ 27-ին։

ՀՈՒԼԻՍԻ 15. – Հայրապետական ուղերձ Ստոկհոլմի Խաղաղության Համաշխարհային կոնգրեսին, ազգերի խաղաղ գոյակցությունն ու ճշմարիտ բարեկամությունը ամրապնդելու մասին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-24. – Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ.Տ. Վազգեն Ա.-ի ծննդյան հիսունամյակի և գահակալության երրորդ տարելիցի հանդիսավոր նշումը Մայր Աթոռում։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20. – Աշխատանքային այցելություն Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ պ. Անտոն Քոչինյանին. քննարկվում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի քանի եկեղեցական հարցեր։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ուղերձը «Կոչ լիբանանահայ ժողովուրդին» խորագրով։

**1959**

ԱՊՐԻԼԻ 11. – Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Առաքելական եկեղեցու Սահմանադրական նախագիծը քննող ժողովը։ Աշխատանքների ավարտ՝ ԱՊՐԻԼԻ 13-ին։

ՄԱՅԻՍԻ 20. – Գերագույն Հոգևոր Խորհրդի պաշտոնական հաղորդումը՝ Վեհափառ Հայրապետի առաջադրությամբ՝ Տաթևի, Հաղարծինի և Հառիճա վանքերը Հայաստանի Պատմական Հուշարձանների պաշտպանության կոմիտեի իրավասությունից վերցնելու և Մայր Աթոռին ի գործածություն հանձնելու մասին։

ՄԱՅԻՍԻ 24. – Խաղաղության պաշտպանության Խորհրդային Կոմիտեի հրավերով, ուղևորություն Մոսկվա, Կոմիտեի ընդլայնված նիստին մասնակցելու համար։ ՄԱՅԻՍԻ 26-ին, Հայրապետական ելույթ Մոսկվայում, ՀՈՒՆԻՍԻ 3-ին՝ վերադարձ Մայր Աթոռ։

ՀՈՒՆԻՍ. – Խաղաղության պաշտպանության գործին մատուցած ծառայությունների համար, Վեհափառ Հայրապետը պարգևատրվում է «Խաղաղության պաշտպանության» շքանշանով։

ՀՈՒԼԻՍԻ 10. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի կոնդակը Եղիշե Պատրիարք Դուրյանի ծննդյան հարյուրամյակը ըստ արժանվույն նշելու մասին։

ՀՈԿՏԵՄԲԵՐ. – Հայրապետական ուղերձ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն.Ս. Խրուշչովին և ԱՄՆ-ի պրեզիդենտ Էյզենհաուերին, հօգուտ խաղաղության ու ժողովուրդների միջև կայուն բարեկամության հաստատման։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1. – Վեհափառ Հայրապետի նամակը Լոնդոն, Քենտրբերիի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն Ջեոֆֆրի Ֆիշերին, ի նպաստ խաղաղության և համընդհանուր զինաթափման։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12. – Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի պատվիրակությունը, գլխավոր քարտուղար, դոկտոր Վիլյամ Վիսերտ դը Հուֆտի գլխավորությամբ։ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ին, Հայրապետական պատարագ ի ներկայության հյուրերի։ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ին՝ մեկնում Մայր Աթոռից։

**1960**

ՀՈՒՆՎԱՐԻ 23. – Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը, նվիրված Անթիլիասում հրատարակված «Հայ եկեղեցու տագնապը» գրքին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը կոչ է անում սփյուռքահայությանը շարունակել աշխատանքները ի միասնություն մեր եկեղեցու և ի պայծառություն Ս. Էջմիածնի։

ՓԵՏՐՎԱՐԻ 12. – ՈՒղևորություն Մոսկվա, Խաղաղության պաշտպանության Խորհրդային Կոմիտեի համագումարին մասնակցելու համար։ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ին Հայրապետական ելույթ՝ ռուսերեն։ Վերադարձ՝ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ին։

ԱՊՐԻԼԻ 25. – Հայրապետական Կոնդակ՝ ուղղված Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Երուսաղեմի և Թուրքիայի հայոց Պատրիարքական Աթոռներին, Հայ եկեղեցու հոգևորականության և հայոց հավատացյալ ժողովրդին, վասն սիրո ու միության։

ՄԱՅԻՍԻ 20. – Հայրապետական ուղևորություն Հյուսիսային և Հարավային Ամերիկա, ապա՝ Ֆրանսիա։ Վեհափառ Հայրապետն այցելում է Միացյալ Նահանգների, Կանադայի, Արգենտինայի, Բրազիլիայի, ՈՒրուգվայի և Փարիզի հայկական եկեղեցական կենտրոնները։ ՀՈՒՆԻՍԻ 10-ին Վաշինգտոնում այցելություն քաղաքագլուխ Ռոբերտ Մեկլատոնին։ ՀՈՒՆԻՍԻ 24-ին՝ Տորոնտոյի (Կանադա)

նահանգապետին, ՕԳՈՍՏՈՍԻ 23-ին՝ Բրազիլիայում, Հանրապետության նախագահ Գուբիշեկին, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ին, Լիսաբոնում (Պորտուգալիա)՝ վարչապետ Անտոնիո Օլվիերի Սալազարին, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ին, Փարիզում, Ֆրանսիայի Հանրապետության նախագահին, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին, Մոսկվայում՝ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ Ա.Ն. Կոսիգինին։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ին, վերադարձ Մայր Աթոռ։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27. – Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ են ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին և Համայն Վրաց Պատրիարք – Կաթողիկոս Եփրեմ Բ-ն։ Նույն օրը, երեք հոգևոր Պետերի այցելությունը Հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Ա.Ե. Քոչինյանին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29. – Մայր Աթոռում, Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ տեղի է ունենում հոգևոր հանդիսություն՝ նվիրված Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման քառասնամյակին։

**1961**

ՀՈՒՆՎԱՐԻ 26. – Հայրապետական Կոնդակ Սերովբե եպիսկոպոս Մանուկյանի նախագահությամբ ստեղծված հանձնաժողովին, Ժնևում (Շվեյցարիա) հայկական նոր եկեղեցի կառուցելու մասին «ի մխիթարություն մեր հավատացյալ զավակներուն»։

ՓԵՏՐՎԱՐԻ 2. – Հայրապետական մասնակցություն Երևանում տեղի ունեցող Խաղաղության պաշտպանության Հանրապետական կոմիտեի համագումարին, որտեղ և՝ ընդարձակ ելույթ նվիրված աշխարհի խաղաղությանը։

ՄԱՅԻՍԻ 7. – Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ են ժամանում Հեսսեն-Նասաու նահանգի (ԳՖՀ) Ավետարանական- լութերական եկեղեցու նախագահ, դոկտ. Մարտին Նիմյուլլերը և ավագ խորհրդատու, հայր դոկտ. Մանֆրեդ Կրյուգերը։ Մեկնում՝ ՄԱՅԻՍԻ 9-ին։

ՄԱՅԻՍԻ 27. – Երևանում, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ ընկ. Ա.Ե. Քոչինյանը ընդունում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ին և հարցազրույց է ունենում նրա հետ։

ՀՈՒՆԻՍԻ 13. – ՈՒղևորություն Պրագա, Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական առաջին կոնգրեսին մասնակցելու համար։ ՀՈՒՆԻՍԻ 14-ին, ելույթ կոնգրեսում, «Խաղաղություն և քրիստոնեական արդարություն» թեմայով, վերադարձին, ՀՈՒՆԻՍԻ 21-ին, Մոսկվայում, աշխատանքային այցելություն ԽՍՀՄ Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ա.Ա. Պուզինին։ Ժամանում Մայր Աթոռ՝ ՀՈՒՆԻՍԻ 23-ին։

ՀՈՒԼԻՍԻ 4. – ՈՒղևորություն Կ. Պոլիս, նախագահելու Պատրիարք Տ. Գարեգին Խաչատրյանի թաղման արարողություններին։ ՀՈՒԼԻՍԻ 18-ին, Անկարայում, հանդիպում Թուրքիայի Հանրապետության նախագահ Ջեմալ Գյուրսելին, ապա այցելություն Վիեննայի հայկական համայնքին։ ՀՈՒԼԻՍԻ 21-ին, Հայրապետական այցելություն Ավստրիայի վարչապետ, դոկտ. Գորբախին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒԼԻՍԻ 27-ին։

ՕԳՈՍՏՈՍԻ 25. – Հայրապետական Կոնդակ հայ գրերի ստեղծող և հայ գրականությունը սկզբնավորող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հազարվեցհարյուրամյակի առթիվ։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 15. – Մայր Աթոռի նորաշեն տպարանի բացման արարողությունը Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ին, Հայրապետական Կոնդակ այդ կապակցությամբ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ.-ն։ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ին, Հայրապետական համատեղ պատարագ Մայր Տաճարում, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ին, Մեծարգո հյուրի մեկնումը Մայր Աթոռից։

**1962**

ՄԱՐՏԻ 12. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակը Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Հովսեփյանի մահվան տասներորդ տարելիցի առթիվ։

Դրվատված է «տիպար հոգևորականը», նրա գործունեությունն ու գրական վաստակը, տրված են հրահանգներ, տարելիցը ըստ արժանվույն նշելու մասին։

ԱՊՐԻԼԻ 26. – Հայրապետական դիմում Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղարությանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու՝ այդ կազմակերպությանն անդամակցելու մասին։ ՕԳՈՍՏՈՍԻ 27-ին, Եկեղեցիների համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Վիլյամ Վիսերտ դը Հուֆտը հեռագրով տեղեկացնում է, որ Հայրապետական դիմումը հարգվել է միաձայնությամբ։

ՄԱՅԻՍԻ 15. – ՈՒղևորություն Կարլովի Վարի (Չեխոսլովակիա), մասնակցելու համար Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական ժողովին։ ՄԱՅԻՍԻ 19-ին, Հայրապետական ելույթ ժողովում, ՄԱՅԻՍԻ 24-ին, վերադարձ Մայր Աթոռ։

ՀՈՒՆԻՍԻ 16. – Հովվապետական այցելություն Ադրբեջանի հայոց թեմին, ՀՈՒՆԻՍԻ 17-ին, հանդիպում տեղական կառավարության և հոգևոր բարձրագույն իշխանության ներկայացուցիչների հետ։ Վերադարձ՝ ՀՈՒՆԻՍԻ 19-ին։

ՀՈՒԼԻՍԻ 7. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակը՝ Ազգային-Եկեղեցական առաջիկա ժողովի գումարման և սրբալույս մեռոնի օրհնության մասին։

ՀՈՒԼԻՍԻ 9. – ՈՒղևորություն Մոսկվա, մասնակցություն բերելու այնտեղ բացվող՝ Ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսին։ ՀՈՒԼԻՍԻ 14-ին, Հայրապետական ելույթ «Աստված սեր է և խաղաղություն» թեմայով։ Վերադարձ՝ ՀՈՒԼԻՍԻ 14-ին։

ՀՈՒԼԻՍ. – Հիմնական վերանորոգումից և կահավորումից հետո, նոր Վեհարանի շենքի հանդիսավոր բացումը։ Վեհափառ Հայրապետը հին Վեհարանի շենքից փոխադրվում է նոր Վեհարան։

ՕԳՈՍՏՈՍԻ 22. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի Հայրապետական Կոնդակը՝ Պոլսի հայոց պատրիարքության հաստատման

հինգհարյուրամյակի առթիվ։ Դրվատվում է այն անփոխարինելի դերը, որը հայկական-ազգային-հոգևոր և մշակութային կյանքում կատարել է պատրիարքությունը։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Մայր Աթոռում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին, Հայրապետական զեկույց ժողովին, Մայր Աթոռի յոթնամյա գործունեության մասին։ Աշխատանքների ավարտ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ին, «Խաղաղության բանաձևի» ընդունումով։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի պատվիրակությունը, հնդիկ Մալաբար եկեղեցու վարդապետ, հայր Պոլ Վիգեզիի գլխավորությամբ։ Մեկնում՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ին։

**1963**

ԱՊՐԻԼԻ 9. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական հեռագիրը ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանին, այդ պաշտոնում նրա ընտրվելու առթիվ։ ՄԱՅԻՍԻ 8-ին Երևանում, Հայրապետական այցելություն Գերագույն Խորհրդի նորընտիր նախագահին և «սիրալիր զրույց ջերմ մթնոլորտում»։

ՀՈՒՆԻՍԻ 29. – Հովվապետական այցելություն Շիրակի թեմին, ՀՈՒՆԻՍԻ 30-ին, Հայրապետական պատարագ և քարոզ Լենինականի «Սուրբ Աստվածածին» եկեղեցում։ Վերադարձ՝ ՀՈՒԼԻՍԻ 2-ին։

ՀՈՒԼԻՍԻ 13. – Մայր Աթոռ է ժամանում Թուրքայի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, իբրև հյուրը Վեհափառ Հայրապետի։ ՀՈՒԼԻՍԻ 22-ին, երկու հովվապետների այցելությունը ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ՝ Նագուշ Հարությունյանին։ Մեծարգո հյուրի մեկնումը՝ ՀՈՒԼԻՍԻ 23-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25. - Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին: ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ին, երկու Հայրապետների այցելությունը ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանին: Մեկնում՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2. – Հովվապետական այցելություն Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը և Լոնդոնի, Եգիպտոսի, Հնդկաստանի հայոց թեմերին: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-ին, Լամբեթի պալատում (Լոնդոն) հանդիպում արքեպիսկոպոս Մայքլ Ռամզիի հետ: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12. – Ժամանում Երուսաղեմ ըստ հրավերի Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ին, Երուսաղեմում, «Կոչ մեր սիրեցյալ ժողովրդին» խորագրով Հայրապետական ուղերձի հրատարակում: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ին, հանդիսավոր պատարագ «Սուրբ Հարության» տաճարում, Քրիստոսի գերեզմանի վրա: ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ին, Ամմանում, այցելություն Հորդանանի թագավոր Հուսեին Ա.-ին, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ին, Երուսաղեմում, Սրբոց Հակոբյանց հայկական միաբանության պատրիարքարանում, տեղի է ունենում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի և նույն օրը քաղաք ժամանած Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ.Տ. Խորեն Ա.-ի հանդիպումն ու պատմական ողջագուրումը: ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ին, Դելիում, Հայրապետական այցելություն Հնդկաստանի Հանրապետության նախագահ Սարվապայի Ռադհակրիշնանին, ուղեկցությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի, ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ին՝ այցելություն վարչապետ Ջավահարլալ Ներուին: Վերադարձ Մայր Աթոռ՝ դեկտեմբերի 26-ին:

**1964**

ԱՊՐԻԼԻ 22. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի շնորհավորական հեռագիրը Մոսկվա, ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահ Ն.Ս. Խրուշչովին, ծննդյան յոթանասունամյակի և Խորհրդային Միության հերոսի կոչում ստանալու առթիվ:

ՄԱՅԻՍԻ 9. – Հայրապետական Կոնդակ, երջանկահիշատակ Տ.Տ. Գևորգ Զ. Չորեքչյան Կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցի առթիվ: Դրվատվում է

մեծագործ Հայրապետի գործունեությունը և հրահանգներ են տրվում նրա հիշատակը ըստ արժանվույն նշելու մասին։

ՕԳՈՍՏՈՍԻ 17. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա. – ի Կոնդակը Ապրիլյան եղեռնի հիսնամյակի առթիվ։ Վերլուծվում են ցեղասպանությունը ծնող քաղաքական-հասարակական դրդապատճառները և տրվում հրահանգներ, այդ հիշատակը հավերժացնելու համար։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի ուղերձը Կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Պողոս Զ. Պապին, Համայն Ռուսիո Պատրիարք Տ.Տ. Ալեքսիին, Քենտրբերիի արքեպիսկոպոս Մայքլ Ռամզիին և Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Վիլյամ Վիսերտ դը Հուֆտին, առաջիկա ապրիլի 24-ին կայանալիք եղեռնի սգահանդեսին իրենց հոգևոր մասնակցությունը բերելու մասին։

**1965**

ՀՈՒՆՎԱՐԻ 12. – ՈՒղևորություն արտասահման, Ադիս-Աբեբայում (Եթովպիա) գումարվելիք Արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի համաժողովին մասնակցելու համար, ապա այցելություն Կահիրեի, Փարիզի, Լոնդոնի հայկական համայնքներին։ ՀՈՒՆՎԱՐԻ 20-ին, Ադիս-Աբեբայում, այցելություն Եթովպիայի կայսր Հայլե Սելասիե Ա.-ին, ՀՈՒՆՎԱՐԻ 25-ին, Կայսեր փոխայցելությունը Վեհափառ Հայրապետին։ ՓԵՏՐՎԱՐԻ 4-ին, Փարիզում, այցելություն զորավար Անդրանիկի շիրիմին։ ՓԵՏՐՎԱՐԻ 10-ին, Լոնդոնում, Հայրապետական այց Քենտրբերիի արքեպիսկոպոս Մայքլ Ռամզիին, ՓԵՏՐՎԱՐԻ 17-ին, Մոսկվայում, այցելություն Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ա.Ա. Պուզինին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ին։

ԱՊՐԻԼԻ 24 – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի «Խոսք աղոթքի և ուխտի» խորագիրը կրող ուղերձը Ապրիլյան եղեռնի հիսնամյա սգատոնի առթիվ։

ՀՈՒՆԻՍԻ 4. – Հայրապետական Կոնդակ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Խորեն Առաջինին, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե Արքեպիսկոպոսին, Պոլսի հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոսին, հայկական բաժանյալ եկեղեցիների միության անհրաժեշտության մասին։

ՀՈՒՆԻՍԻ 9. – ՈՒղևորություն Ռումինիա և Բուլղարիա, ըստ հրավերի Բուլղարիայի պատրիարք Կիրիլի և Ռումինիայի պատրիարք Ժուստինիանի։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒԼԻՍԻ 6-ին։

ՀՈՒԼԻՍԻ 10. – ՈՒղևորություն Հելսինկի (Ֆինլանդիա), Խաղաղության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողովին մասնակցելու համար։ ՀՈՒԼԻՍԻ 12-ին, ելույթ համաժողովում, վերադարձ՝ ՀՈՒԼԻՍԻ 17-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐ. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական նամակը, Երևանում նոր հրատարակվելիք «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին։ Բնութագրելով նրա դերը Սփյուռք-Հայրենիք կապերի ամրապնդման գործում, բարեմաղթվում է «լիակատար հաջողություն»։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13. – Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Խորհրդային Միության հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանը և արժանանում Հայրապետական ընդունելության։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28. – Ապրիլյան եղեռնի հիսնամյա սգատոնի և Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ հանդիսություններ Մայր Աթոռում։ Քույր եկեղեցիների անունից հանդես են գալիս Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Եփրեմ Բ.-ն, Հայ կաթողիկե պատրիարք Իգնատիոս – Պետրոս Պաթանյանը, Հաբեշական եկեղեցու ներկայացուցիչ Աբունա Պետրոս Միտրոպոլիտը և ուրիշներ։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ին, հավարտ պատարագի, Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանի բացումը Մայր Աթոռում։ Հանդիսությունների ավարտ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ին։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2. – Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանը Հանրապետության Գերագույն Խորհրդի պատվոգիր է հանձնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ին։

**1966**

ՀՈՒՆՎԱՐԻ 1. – Հայրապետական Կոնդակ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադրման վաթսունամյակի առթիվ։ Բարեմաղթվում են հաջողություններ, «որպեսզի նույն ոգիով, նույն եռանդով և նույն արդյունավետությամբ շարունակեն իրենց բարեգործական առաքելությունը»։

ՓԵՏՐՎԱՐԻ 23. – ՈՒղևորություն Մոսկվա, մասնակցելու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի անվանակոչության հանդիսությանը։ ՓԵՏՐՎԱՐԻ 27-ին, ողջույնի խոսք հոբելյարին՝ ֆրանսերեն։ ՄԱՐՏԻ 1՝ աշխատանքային այցելություն Կրոնական գործերի խորհրդի նախագահ Կուրոյեդովին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՄԱՐՏԻ 4-ին։

ՄԱՐՏԻ 11. – Հայրապետական ողջույնի խոսք սփյուռքահայ արձակագիր Համաստեղի (Համբարձում Հովհաննեսի Կելենյան) գրական-մշակութային գործունեության հիսնամյակի և ծննդյան յոթանասունամյակի առթիվ։ Հոբելյարը որակված է որպես «հայ գրականության երկնակամարին վրա միշտ բարձրացող աստղ մը»։

ՄԱՅԻՍԻ 23. – Այցելություն ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանին. տեղի է ունենում աշխատանքային զրույց «բացառիկ ջերմ մթնոլորտում»։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29. – Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Ռումին Օրթոդոքս եկեղեցու պետ, Պատրիարք Ժուստինիանը, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ին, երկու Հայրապետների համատեղ աղոթք Մայր Տաճարում։ Հյուրի մեկնումը Մայր Աթոռից՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ին։

## 1967

ՓԵՏՐՎԱՐԻ 5. – Հայրապետական Կոնդակ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Առաքել Առաքելյանին, նրա ծննդյան ութսունամյակի առթիվ։ Բարձր է գնահատված նրա գրական և կրթական-մշակութային գործունեությունը։

ՄԱՐՏԻ 30. – Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտոր Է.Կ. Բլեյկը։

ԱՊՐԻԼԻ 2. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի աշխատանքային այցելությունը Երևանի Քաղխորհրդի նախագահ Գրիգոր Հասրաթյանին, որտեղ քննարկվում են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր։ «Ընդունելությունն անցնում է ջերմ, հայկական մթնոլորտում»։

ԱՊՐԻԼԻ 25. – Հայրապետական այցելություն Մոսկվա, Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին։ ԱՊՐԻԼԻ 26-ին, Մոսկվայում, պաշտոնական այցելություն Եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Վ. Կուրոյեդովին, վերադարձ Մայր Աթոռ՝ ՄԱՅԻՍԻ 2-ին։

ՄԱՅԻՍԻ 26. – Հայրապետական ուղերձ, նվիրված Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ.Տ. Բաբկեն Կյուլեսերյանի հիշատակին, նրա ծննդյան հարյուրամյակի առթիվ։ Բարձր է գնահատված «հոգելույս կաթողիկոսի» կյանքն ու գործունեությունը։

ՀՈՒՆԻՍԻ 2. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Բուլղարիայի Օրթոդոքս եկեղեցու պետ Կիրիլ Պատրիարքը։ ՀՈՒՆԻՍԻ 4-ին, Հայրապետական պատարագ Մայր Տաճարում, մեծարգո հյուրի մեկնումը՝ ՀՈՒՆԻՍԻ 6-ին։

ՀՈՒԼԻՍԻ 6. – ՈՒղևորություն Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոն։ ՀՈՒԼԻՍԻ 11-ին, Հայրապետական ելույթ Ժնևում, նվիրված միջեկեղեցական հարաբերությունների հարցերին, վերադարձ Մայր Աթոռ՝ ՕԳՈՍՏՈՍԻ 19-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21. – Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում հնդիկ Մալաբար եկեղեցու պատվիրակությունը, Հովհաննես Մար-Սեվերիոսի գլխավորությամբ։ Մեկնում՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ին։

ՆՈՅԵՄԲԵՐ. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի «Հայրապետական խոսքը» Հոկտեմբերյան Հեղափոխության հիսնամյակի առթիվ։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18. – Հայրապետական Կոնդակ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Տ.Տ. Ալեքսիին, նրա ծննդյան իննսունամյակի առթիվ։ Պատրիարքի ազգանվեր գործունեությունը դրվատելուց հետո, տեղեկացվում է, որ Նորին Սրբությունը պարգևատրվել է Գրիգոր Լուսավորչի Ա. Կարգի շքանշանով։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1. – Էջմիածնի Մայր Աթոռում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է ունենում հոգեհանգիստ ի հիշատակ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի մահվան հիսնամյակի։ Բովանդակալից քարոզով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

## 1968

ՀՈՒՆՎԱՐԻ 8. – ՈՒխտագնացություն Երևան, աղոթելու Ծիծեռնակաբերդում կառուցված Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանի առաջ։

ՀՈՒՆՎԱՐԻ 20. – Հայրապետական Կոնդակ տիկին Սիրան Սեզայի (Սիրան Տաճատի Զարիֆյան) խմբագրությամբ Բեյրութում հրատարակվող «Երիտասարդ Հայուհի» ամսագրի տասնհինգամյակի առթիվ։ Բարձր է գնահատված ինչպես ամսագրի, այնպես էլ նրա խմբագրի գործունեությունը։

ԱՊՐԻԼԻ 16. – ՈՒղևորություն արտասահման, հովվական այցելություն տալու Ավստրիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, ՈՒրուգվայի, Բրազիլիայի և Ֆրանսիայի հայկական համայնքներին։ ԱՊՐԻԼԻ 26-ին, Նյու-Յորքում, քաղաքագլուխ Ջոն Ֆ. Լինիտզիի այցելությունը Վեհափառ Հայրապետին, ՄԱՅԻՍԻ 2-ին, պաշտոնական այցելություն ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար ՈՒ. Տանին։ ՀՈՒԼԻՍԻ 11-ին, այցելություն Սան-Պաուլոյի (Բրազիլիա) նահանգապետ Ռոբերտ Աբրեիրո Սուդրեին, ՀՈՒԼԻՍԻ 22-ին,

Փարիզում, Հայրապետական այցելություն քաղաքագլուխ Բեռնար Ռոշեին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒԼԻՍԻ 27-ին։

ԱՊՐԻԼԻ 25. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական նամակը Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Տ.Տ. Ալեքսիին, Ռուսական պրավոսլավ եկեղեցու պատրիարքության վերականգնման հիսնամյակի առթիվ։

ՄԱՅԻՍԻ 26. - Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ.Տ Վազգեն Ա.-ի Հայրապետական Կոնդակը Սարդարապատի ճակատամարտի հիսնամյակի առթիվ։

ՀՈՒԼԻՍԻ 31. – Երևանում, Հայրապետական այցելություն ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանին։ Տեղի է ունենում «գերմ զրույց, որի ժամանակ Հայոց Հայրապետը պատմում է տպավորություններ իր արտասահմանյան ուղևորությունից»։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19. – ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ն պարգևատրվում է «Պատվո Նշան» շքանշանով։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24. – Մայր Աթոռ է ժամանում գերմանացի արձակագիր, հրապարակախոս Արմին Թեոֆիլ Վեգները և արժանանում Հայրապետական ընդունելության, «որն անցավ ջերմ մթնոլորտում»։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9. – Հայրապետական ուղերձ «Օրհնություն Սուրբ Էջմիածնից» խորագրով, քաղաքամայր Երևանի 2750-ամյակի առթիվ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21. – Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հրավերով՝ աշխատանքային այցելություն Մոսկվա, Միջեկեղեցական Խորհրդակցական ժողովին մասնակցելու համար։ Վերադարձ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ին։

## 1969

ՀՈՒՆՎԱՐԻ 24. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի Կոնդակը հայ երգարվեստի դասական Կոմիտաս վարդապետի (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) ծննդյան հարյուրամյակի առթիվ։

ՄԱՐՏԻ 26. – Մայր Աթոռում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի նախագահությամբ, իր աշխատանքային գործունեությունն է սկսում Ներքին թեմերի խորհրդակցական ժողովը։ Աշխատանքների ավարտ՝ ՄԱՐՏԻ 29-ին։

ՄԱՅԻՍԻ 17. – ՈՒղևորություն Վիեննա, ազգային հայ բարերարներ Ալեքս Մանուկյանի և Տատուր Տատուրյանի հետ հանդիպելու համար։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՄԱՅԻՍԻ 24-ին։

ՀՈՒՆԻՍԻ 1. – Հայրապետական Կոնդակ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանին, ամսագրի հրատարակության քսանհինգամյակի առթիվ։ Նշվում է, որ խմբագիրն աշխատում է «ոգեշնչումով, հմտությամբ ու ժիր եռանդով»։

ՀՈՒՆԻՍԻ 7. – Հայրապետական այցելություն Ադրբեջանի հայոց թեմին։ ՀՈՒՆԻՍԻ 9-ին, պաշտոնական այցելություն Ադրբեջանի Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ Իբրահիմովին, Ադրբեջանի Շեյխ-ՈՒԼ իսլամին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒՆԻՍԻ 10-ին։

ՀՈՒՆԻՍԻ 18. – ՈՒղևորություն Բեռլին (ԳԴՀ), մասնակցելու համար այնտեղ իր աշխատանքներն սկսող Խաղաղության Համաշխարհային համագումարին։ ՀՈՒՆԻՍԻ 23-ին, Հայրապետական ելույթ համագումարում, ՀՈՒՆԻՍԻ 28-ին, վերադարձ Մայր Աթոռ։

ՀՈՒԼԻՍԻ 1. – Ալեքսի Պատրիարքի հրավերով ուղևորվում է Զագորսկ, Քրիստոնեական եկեղեցիների և մահմեդական, հրեական ու բուդդայական կրոնական կազմակերպությունների համագումարին մասնակցություն բերելու համար։ ՀՈՒԼԻՍԻ 1-ին, Հայրապետական ելույթ համագումարում, ՀՈՒԼԻՍԻ 4-ին, ճառ համագումարի փակման առթիվ։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒԼԻՍԻ 7-ին։

ՕԳՈՍՏՈՍԻ 30. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի ողջույնի գիրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Լոս-Անջելոս՝ ազգային հերոս Սողոմոն Թեհլերյանի հուշարձանի բացման առթիվ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1. – Հայրապետական Կոնդակ ազգային բարերար Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի ծննդյան վաթսունամյակի առթիվ հանդիսություններ Մայր Աթոռում։ Շնորհավորական հեռագրեր ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանից, ԽՍՀՄ Կրոնական գործերի նախագահ Վ. Կուրոյեդովից, Նորին Սրբություն Պավղոս Զ. Պապից, Հունաց տիեզերական պատրիարք Աթենագորասից, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիից, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Եփրեմ Բ.-ից և ուրիշներից։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27. – Մայր Աթոռում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ և նրա բացման բովանդակալից խոսքով, իր աշխատանքներն է սկսում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսական ժողովը, որը քննարկում է ներքին-կազմակերպչական բնույթի հարցեր։ Աշխատանքների ավարտ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12. – Հանդիսություն և հանդիսավոր սուրբ պատարագ Մայր Աթոռում, նվիրված Թարգմանչաց և Հայ մշակույթի տոներին։ Հավուր պատշաճի քարոզով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

**1970**

ՀՈՒՆՎԱՐԻ 21. – Հայրապետական Կոնդակ Առաքել վարդապետ Դավրիժեցու մահվան երեքհարյուրամյակի առթիվ։ Դավրիժեցին բնութագրված է որպես «հայ վերածնունդի շարժման կարևոր դեմքերեն ու դերակատարներեն մին»։

ՓԵՏՐՎԱՐԻ 4. – Հայ եկեղեցու գործերի կոմիտեի նորընտիր նախագահ Սարգիս Գասպարյանի պաշտոնական այցելությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ին, Ս.Էջմիածնում։ ՓԵՏՐՎԱՐԻ 11-ին, Հայրապետական փոխայցելություն Երևանում։

Երկու հանդիպումների ժամանակ էլ «տեղի է ունեցել սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորում»։

ՓԵՏՐՎԱՐԻ 13. – Հայրապետական Կոնդակ Ներսես Ե. Կաթողիկոս Աշտարակեցու ծննդյան երկուհարյուրամյակի առթիվ։ Կաթողիկոսի ազգանվեր գործը բնութագրելուց ու ներկայացնելուց հետո, տրվում են կոնկրետ հրահանգներ, նրա հիշատակը արժանավորապես նշելու համար։

ՓԵՏՐՎԱՐԻ 25. – Մայր Աթոռ են ժամանում Բրիտանական Սուրբ Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչներ՝ կանոնիկոս Ռ.Վ.Ֆ.Վուտսոնը և դոկտ. Վիլիամ Դ. Ռիբբրնը և արժանանում են Հայրապետական ընդունելության։ Մեկնում՝ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ին։

ԱՊՐԻԼԻ 20. – ՈՒղևորություն Մոսկվա, մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի թաղման սգահանդեսին։ ԱՊՐԻԼԻ 21-ին, Մոսկվայում, հոգեհանգստի արարողություն հայկական ծեսով, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, վերադարձ Մայր Աթոռ՝ ԱՊՐԻԼԻ 22-ին։

ԱՊՐԻԼԻ 24. – Հայրապետական Կոնդակ, Հայաստանում Խորհրդային Կարգերի հաստատման հիսնամյակի առթիվ։

ՄԱՅԻՍԻ 3. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ուղևորությունը Հռոմ, այցելելու Նորին Սրբություն Պավղոս Զ. Պապին։ ՄԱՅԻՍԻ 12-ին, Վատիկանում, երկու քահանայապետերի «Համատեղ հայտարարության» ստորագրումը, նվիրված խաղաղության պաշտպանությանը։ Այցելություն Վենետիկի Մխիթարյաններին, ապա Միլանի, Փարիզի, Լիոնի, Վալանսի, Դեսինի, Մարսելի, Մոնակոյի, Նիցցայի և Ալֆորվիլի հայկական եկեղեցական համայնքներին։ Վերադարձ՝ ՀՈՒՆԻՍԻ 20-ին։

ՀՈՒՆԻՍԻ 28. – Վեհափառ Հայրապետի ռադիո հարցազրույցը Երևանում, արտասահմանյան ԻՐ տպավորությունների և այնտեղ ծավալվող ազգային-հայրենասիրական գործունեության մասին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ցավակցական հեռագիրը Կահիրե, Արաբական Միացյալ Հանրապետության փոխ-նախագահ Անվար Սադաթին, Հանրապետության նախագահ Գամալ Աբդել Նասերի մահվան առթիվ։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 26. – Հայրապետական Կոնդակ Մկրտիչ Կաթողիկոս Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) ծննդյան հարյուրհիսունամյակի առթիվ։ «Ամենայն Հայոց Հայրիկը կմնա բոլորիս համար կենդանի, պայծառ իբրև խորհուրդ, իբրև կարապետ, իբրև պատգամ»։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2. – Մայր Աթոռ է ժամանում աշխարհահռչակ հայ երգահան Արամ Խաչատրյանը և արժանանում Հայրապետական ընդունելության։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28. – Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանի Հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկո, նվիրված հայ գրականության և հայագիտության մեծ երախտավոր Ղևոնդ Ալիշանի ծննդյան հարյուրամյակին։ Վերջում հավուր պատշաճի օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

**1971**

ՄԱՐՏԻ 9. – Հայրապետական ցավակցական հեռագիր Սոֆիա, Բուլղարիայի Տ. Կիրիլ Պատրիարքի մահվան առթիվ։

ՄԱՐՏԻ 10. - Վեհափառ Հայրապետի Կոնդակը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին, Գերմանիայում հայկական կրոնական համայնք կազմակերպելու և այդ կապակցությամբ նախնական պատրաստությունները սկսելու մասին։

ՄԱՅԻՍԻ 14. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական հեռագիրը Վրացական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Գիվի Ջավախիշվիլուն, Վրաստանի խորհրդայնացման հիսնամյակի առթիվ։

ՀՈՒՆԻՍԻ 18. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, Հայաստանի Խորհրդային գրողների միության առաջին քարտուղար Էդ. Թոփչյանին, խորհրդահայ բանաստեղծ Պարույր Սևակի (Պարույր Ռաֆայելի Ղազարյան) ողբերգական մահվան առթիվ։ ՀՈՒԼԻՍԻ 4-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն հանգուցյալի հիշատակին, որտեղ դամբանական խոսքով հանդես է գալիս Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ն։

ՀՈՒՆԻՍԻ 1. – ՈՒղևորություն Մոսկվա, մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի ընտրության հանդիսություններին։ ՀՈՒՆԻՍԻ 3-ին, Հայրապետական ողջույնի խոսք, վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒՆԻՍԻ 5-ին։

ՀՈՒԼԻՍԻ 1. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ցավակցական հեռագիրը Մոսկվա, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ա.Ն. Կոսիգինին, Խորհրդային երեք տիեզերագնացների (Գ.Տ. Դոբրովոլսկի, Վ.Ն. Վոլկով, Վ.Ի. Պացան) ողբերգական մահվան առթիվ։

ՀՈՒԼԻՍԻ 9. – Ոչ-պաշտոնական այցելություն Ժնև, Մայր Աթոռի հետ կապված աշխատանքային հարցերով։ ՀՈՒԼԻՍԻ 13-ին, Ժնևում այցելություն Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Էժեն Կարսոն Բլեյկին, ՀՈՒԼԻՍԻ 26-ին, Մոսկվայում՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենին։ Վերադարձ՝ ՀՈՒԼԻՍԻ 27-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3. – Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Ալեքս Մանուկյանը, իր կնոջ՝ Մարի Մանուկյանի հետ, իբրև հյուրը Վեհափառ Հայրապետի։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ին, այցելություն Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանին, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ին, Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ Գրիգոր Հասրաթյանին։ Մեկնում՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9. – Մայր Աթոռ Ս. Էջմիածին են ժամանում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներ Տ. Տաճատ արքեպիսկոպոս ՈՒռֆալյանը, Տ.

Արտավազդ եպիսկոպոս Թրթոյանը, Վահե Սեթյանը և Խաչիկ Պապիկյանը։ Վեհափառ Հայրապետի հետ «բարեկամական մթնոլորտում չորս հանդիպումներ ունենալով» հյուրերը ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ին մեկնում են։

**1972**

ՀՈՒՆՎԱՐԻ 28. – Հայրապետական Կոնդակ Մայր Աթոռի տպարանի հիմնադրության երկուհարյուրամյակի առթիվ։ Բնութագրված է «ազգօգուտ այդ հաստատության» հիմնադիր Սիմեոն Ա. Երևանցի Կաթողիկոսի գործունեությունը և տրված է 1771 թ. «գոյության կոչված» տպարանի համառոտ պատմությունը։

ՓԵՏՐՎԱՐԻ 1. – Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Էժեն Կարսոն Բլեյկը։ ՓԵՏՐՎԱՐԻ 2-ին, Հայրապետական պատարագ և էկումենիկ համատեղ աղոթք Մայր Տաճարում, մեծարգո հյուրերի մեկնում՝ ՓԵՏՐՎԱՐԻ 4-ին։

ԱՊՐԻԼԻ 11. – ՈՒղևորություն Թբիլիսի, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ.-ի թաղման սգահանդեսին մասնակցելու համար։ ԱՊՐԻԼԻ 13-ին, Թբիլիսիում, Հայրապետական դամբանական խոսք։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ԱՊՐԻԼԻ 14-ին։

ՄԱՅԻՍԻ 10. – Հայրապետական Կոնդակ ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի մահվան առթիվ։ ՄԱՅԻՍԻ 11-ին հոգեհանգստի մասնավոր պաշտոն Մայր Տաճարում, ի ներկայության Վեհափառ Հայրապետի։

ՀՈՒՆԻՍԻ 16. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Հռովմեական Կաթողիկե եկեղեցու պատվիրակությունը, կարդինալ Ժան Վիլլբրանսի գլխավորությամբ։ ՀՈՒՆԻՍԻ 17-ին, էկումենիկ համատեղ աղոթք Մայր Տաճարում, ՀՈՒՆԻՍԻ 19-ին, համատեղ աղոթք Ծիծեռնակաբերդի հայ նահատակների հուշարձանի առջև։ Մեծարգո հյուրի մեկնումը՝ ՀՈՒՆԻՍԻ 20-ին։

ՀՈՒՆԻՍԻ 30. - Հայրապետական այցելություն Թբիլիսի, մասնակցելու Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի գահակալության հանդիսություններին։ ՀՈՒԼԻՍԻ 2-ին,

Հայրապետական ողջույնի խոսք Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Դավիթ Ե.-ի ընտրության առթիվ, վերադարձ՝ ՀՈՒԼԻՍԻ 4-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակը Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակը յուրաքանչյուր տարի մայիսի 22-ին հայկական եկեղեցիներում նշելու մասին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Դավիթ Ե.-ն։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին, երկու Հայրապետների համատեղ էկումենիկ աղոթքը Մայր Տաճարում, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ին, պաշտոնական այցելություն ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանին։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ին, մեծարգո հյուրի մեկնումը Մայր Աթոռից։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9. – Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում ղպտական ուղղափառ եկեղեցու հովվապետ, Նորին Սրբություն Շենուդա Գ.-ն։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ին, երկու Հայրապետների համատեղ աղոթքը Մայր Տաճարում, մեծարգո հյուրի մեկնումը՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10. – Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենը։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ին՝ Հայրապետական հանդիսավոր պատարագ Մայր Աթոռում, ի ներկայություն Ն.Ս. Պիմեն Պատրիարքի։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ին՝ մեկնում։

**1973**

ՀՈՒՆՎԱՐԻ 16. – Վազգեն Ա. Կաթողիկոսի Կոնդակը Ներսես Շնորհալու մահվան ութհարյուրամյակի առթիվ։ 1973 թվականը հայտարարվում է հոբելյանական տարի, տրվում են կոնկրետ հրահանգներ հոբելյանը նշելու համար։ «Էջմիածին» ամսագրի 1973 թ. № 12-ը (դեկտեմբեր) ամբողջությամբ նվիրվում է այդ հոբելյանին։

ՓԵՏՐՎԱՐԻ 23. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի այցելությունը Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նազուշ Հարությունյանին։ Տեղի է ունենում «ջերմ զրույց, սիրալիր մթնոլորտում»։

ՄԱՅԻՍԻ 1. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի Հայրապետական ողջույնն ու օրհնության խոսքը Ամերիկայի Միացյալ Նահանգների հոգևորականների համագումարին։ Բնութագրված է «կրոնական հավատքի և բարոյական արժեքներու տագնապը» և տրված են կոնկրետ հրահանգներ դրանք վերացնելու համար։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16. – Ս.Էջմիածնի Մայր Տաճարում, հավարտ Ս. Պատարագի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն ի հիշատակ ԽՍՀՄ Ժողովրդական ճարտարապետ, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր Ռաֆայել Սարգսի Իսրայելյանի (ծնվ. 1908 թ., սեպտեմբերի 4, Թիֆլիս)։ Իր դամբանական խոսքում Վեհափառը բնութագրել է հանգուցյալին որպես տաղանդավոր ճարտարապետ, «որը հիանալիորեն միահյուսում է անցյալն ու ներկան», որպես «մեծատաղանդ հայ արվեստագետ»։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5. – Վեհափառ Հայրապետի խոսքը «Ս. Հռիփսիմե» տաճարում, Ներսես Շնորհալու մահվան ութհարյուրամյակի առթիվ։ Շնորհալին բնութագրված է որպես «ոչ միայն մեր եկեղեցու մեծ Հայրապետներից մեկը, այլ նաև բանաստեղծ, գրագետ ու մեծ բարոյախոս, հասարակական կյանքի բարենորոգիչ, պետական գործիչ»։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25. – Վեհափառ Հայրապետը մեկնում է Մոսկվա, Խաղաղության Համաշխարհային համաժողովին մասնակցելու համար։ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ին, Մոսկվայի Ս. Այլակերպության տաճարում, համատեղ էկումենիկ աղոթք, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ին, Հայրապետական ելույթ (ֆրանսերեն)։ Վերադարձ Մայր Աթոռ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ին։

**1974**

ՀՈՒՆՎԱՐԻ 16. – Նոր տարվա առթիվ Հայրապետական այցելություն ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Գրիգոր Արզումանյանին, Երևանում։ «Տեղի է ունենում ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում»։

ՄԱՐՏԻ 18. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի Կոնդակը՝ Կիլիկյան Հայաստանի գոյատևման երեքհարյուրամյա շրջանը նշելու և 1975 թվականը համարելու

հայ եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետության Կիլիկյան շրջանի հիշատակի տարի։ Հրահանգվում է, որ «Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում տեղի ունենան գոհաբանական մաղթանքի արարողություններ»։

ԱՊՐԻԼԻ 4. – Հայրապետական ցավակցական հեռագիր Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժորժ Պոմպիդուի մահվան առթիվ։

ԱՊՐԻԼԻ 24. – Հանդիսավոր Սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում, Ապրիլյան եղեռնի հիսունիններորդ տարեդարձի առթիվ։ Հավարտ պատարագի, օրվան նվիրված բովանդակալից քարոզով, հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

ՄԱՅԻՍԻ 10. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Բուլղարական Օրթոդոքս եկեղեցու հովվապետ Տ. Մաքսիմ Պատրիարքը։ ՄԱՅԻՍԻ 11-ին, երկու Հովվապետների համատեղ էկումենիկ աղոթք Մայր Տաճարում, ՄԱՅԻՍԻ 12-ին, Հայրապետական Սուրբ պատարագ և ողջույնի խոսք՝ ուղղված մեծարգո հյուրին։ ՄԱՅԻՍԻ 14-ին, երկու քույր եկեղեցիների համատեղ աշխատանքային գործունեության մասին փաստաթղթի ստորագրում, ՄԱՅԻՍԻ 15-ին, Պատրիարքի մեկնումը Մայր Աթոռից։

ՄԱՅԻՍԻ 19. – Հանդիսավոր Սուրբ պատարագ և հոգեհանգիստ, երջանկահիշատակ Տ.Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան քսաներորդ տարելիցի առթիվ։ Հավարտ պատարագի, հավուր պատշաճի քարոզով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

Հուլիսի 16. – Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի հրավերով, Վեհափառ Հայրապետը Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի ուղեկցությամբ պաշտոնական այցելություն է տալիս Ռուսական պրավոսլավ եկեղեցուն Մոսկվայում, ապա Կիևում։ ՀՈՒԼԻՍԻ 18-ին Հայրապետական ողջույնի խոսք Զագորսկում, ուղղված Պիմեն Պատրիարքին, ՀՈՒԼԻՍԻ 24-ին, համաբնույթ ողջույնի խոսք Կիևում, ուղղված Ֆիլարետ միտրոպոլիտին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒԼԻՍԻ 25-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18. – Մայր Աթոռ է ժամանում Ամերիկայի եկեղեցիների ազգային խորհրդի պատվիրակությունը, Հայր դոկտ. Դեվիդ Հանթըրըի գլխավորությամբ և արժանանում Հայրապետական ընդունելության։ Պատվիրակության մեկնում՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28. – Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է ունենում Ղազարապատի վերակառուցված շենքի հանդիսավոր բացման արարողությունը (կառուցվել էր Ղազար Ա. Ջահկեցի կաթողիկոսի ջանքերով, 1750-ական թվականներին)։ Հավուր պատշաճի քարոզով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30. – Հայրապետական պաշտոնական այցելություն Երևանում, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նազուշ Հարությունյանին։ Տեղի է ունենում ջերմ զրույց, որը «անցնում է ջերմ և մտերմիկ պայմաններում»։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7. – Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, վախճանվում է Տիրամայր Սիրանույշ Մարգարի Պալճյանը (մինչև ամուսնությունը՝ Մարգարյան)։ Ծնվ. 1884 թ. Ադրիանապոլսում (Էդիրնե, Թուրքիայի եվրոպական մաս)։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 19. – Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց Պապ և Պատրիարք Նիկոլաուս Զ.-ն։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ին, երկու Հովվապետների համատեղ էկումենիկ աղոթքը Մայր Տաճարում, ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ին, Հայրապետական պատարագ և երկկողմանի փոխադարձ ողջույնի խոսքեր նույն տաճարում։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ին, Աշխարհի խաղաղության պաշտպանության կոչի համատեղ ստորագրում։ Մեծարգո հյուրի մեկնումը՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ին։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12. - Հայրապետական ողջույնի գիր պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վազգեն Արտաշեսի Հակոբյանին, «Մեսրոպ Մաշտոցյան մրցանակի դափնեկրի» տիտղոս ստանալու առթիվ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27. - Երևանում, նշվում է Սփյուռքահայության հետ Մշակութային կապի կոմիտեի գործունեության տասնամյակը։ Հանդիսությանն ԻՐ մասնակցությունն է բերում և հավուր պատշաճի ելույթով հանդես է գալիս Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ն։

**1975**

ՓԵՏՐՎԱՐԻ 24. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախաձեռնությամբ, Մայր Աթոռում, իր աշխատանքներն է սկսում Խաղաղության Համաքրիստոնեական Կոնֆերանսի Միջազգային քարտուղարության առաջին նստաշրջանը։ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ին, քսանվեց երկրների պատվիրակների համատեղ էկումենիկ աղոթք Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ։ Աշխատանքների ավարտը՝ ՄԱՐՏԻ 1-ին։

ԱՊՐԻԼԻ 24. – Հավարտ Հանդիսավոր ս. պատարագի, եկեղեցականների և հավատացյալների ստվար թափորը Վազգեն Ա. Կաթողիկոսի գլխավորությամբ, առաջնորդվում է դեպի «Նահատակաց հուշարձանը», որտեղ Վեհափառ Հայրապետը կատարում է հոգեհանգստի արարողություն, նվիրված Ապրիլյան եղեռնի վաթսունամյակին։

ԱՊՐԻԼԻ 28. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի տասներորդ ուղևորությունը արտասահման։ ՄԱՅԻՍԻ 1-ին, հովվապետական այցելություն Բուխարեստ, ՄԱՅԻՍԻ 3-ին, Հայրապետական Պատարագ և քարոզ Բուխարեստի «Սուրբ Հրեշտականապետք» հայկական եկեղեցում, ՄԱՅԻՍԻ 6-ին, պաշտոնական այցելություն Ռումինական Օրթոդոքս եկեղեցու պետ Ժուստինիան պատրիարքին։ ՄԱՅԻՍԻ 16-ին մեկնում Բուլղարիա, ՄԱՅԻՍԻ 17-ին, Սոֆիայում հանդիպում Բուլղարական Օրթոդոքս եկեղեցու պետ Մաքսիմ պատրիարքին, ՄԱՅԻՍԻ 20-ին, երկու Հայրապետների այցելությունը Բուլղարիայի եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Ստոյնո Բարըմովին։ ՄԱՅԻՍԻ 28-ին, վերադարձ Մոսկվա, ՄԱՅԻՍԻ 29-ին, Մոսկվայի պատրիարքարանում, հանդիպում Տ. Պիմեն Պատրիարքի հետ։

ՀՈՒՆԻՍԻ 5-ին ուղևորություն Լոնդոն, ՀՈՒՆԻՍԻ 10-ին, Հայրապետական այցելություն Լոնդոնի եպիսկոպոս Ջերալդ Էլիսոնին, ՀՈՒՆԻՍԻ 11-ին, Լամբեթ պալատում՝ Քենթրբերիի արքեպիսկոպոս Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանին, ՀՈՒՆԻՍԻ 12-ին, ժամանում Փարիզ, ՀՈՒՆԻՍԻ 13-ին, Փարիզի հայոց առաջնորդարանում, Վեհափառին են այցելում Փարիզի Կարդինալ Ֆրանսուա Մարտին և պապական նվիրակ Ռիկի Լամբերթին։ ՀՈՒՆԻՍԻ 20-ին, ժամանում Ամման (Հորդանանի Հաշիմական թագավորություն), ՀՈՒՆԻՍԻ 21-ին, Ամմանում, Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Եղիշե Տերտերյանի ուղեկցությամբ, այցելություն Հորդանանի գահաժառանգ Հասան Բ. իշխանին, ՀՈՒՆԻՍԻ 22-ին հանդիսավոր ս. Պատարագ և Հայրապետական քարոզ Ամմանի հայկական եկեղեցում։ ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ մեկնում Երուսաղեմ։ ՀՈՒՆԻՍԻ 24-ին, այցելություն Բեթղեհեմ՝ Քրիստոսի ծննդյան այրը, ապա այցելություն քաղաքագլուխ Իլիաս Ֆրեժին, կրոնից մինիստր դոկտ. Ռաֆայել Իցհակին։ ՀՈՒՆԻՍԻ 26-ին, Երուսաղեմում, Տ. Եղիշե Պատրիարքի ուղեկցությամբ, այցելություն հունաց Տ. Բենեդիկտոս սրբազան պատրիարքին, ՀՈՒՆԻՍԻ 29-ին, Հայրապետական հանդիսավոր Պատարագ և քարոզ Երուսաղեմում։ ՀՈՒԼԻՍԻ 3-ին, ժամանում Փարիզ, ՀՈՒԼԻՍԻ 5-ին՝ Մոսկվա, վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒԼԻՍԻ 8-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16. – Վեհափառ Հայրապետի հրավերով և Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի՝ «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի նախաձեռնությամբ, Մայր Աթոռում իր աշխատանքներն է սկսում Օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցությունը, որին մասնակցում են շուրջ երեսունհինգ պատգամավորներ։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ին, Հայրապետական ողջույնի խոսք Վեհարանում, ուղղված խորհրդակցության մասնակիցներին, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ին, Հայրապետական քարոզ Մայր Տաճարում։ Աշխատանքների ավարտ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28. – Հանդիսություններ Մայր Աթոռում՝ նվիրված Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալության քսաներորդ տարեդարձին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական ուղերձը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Բուխարեստ, Ռումինական Օրթոդոքս եկեղեցու Պատրիարքության հաստատման հիսունամյակի և Ռումին Օրթոդոքս եկեղեցու ավտոկեֆալության ինսունամյակի առթիվ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9. – Հոբելյանական հանդիսություններ Մայր Աթոռում, նվիրված հայ գրականության դասական Ավետիք Իսահակյանի ծննդյան հարյուրամյակին: Ս. Պատարագ Մայր Տաճարում, Հայրապետական քարոզ և հոգեհանգիստ, երեկոյան՝ Հանդիսությանց դահլիճում հոբելյանական հանդիսավոր նիստ:

**1976**

ԱՊՐԻԼԻ 6. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ուղերձը Նյու-Վինձորում (ԱՄՆ) գումարված Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի նստաշրջանին: Բարձր է գնահատված կոնֆերանսի գործունեությունը խաղաղությունն ամրապնդելու բնագավառում:

ԱՊՐԻԼԻ 21. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի նամակը Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Պողոս Անանյանին: Հավաստելով «Մայր Աթոռի համեստ միջոցներեն» հինգ հազար ամերիկյան դոլարի ուղարկման փաստը, դրվատանքով արձանագրվում է Մխիթարյանների ազգանվեր գործունեությունը:

ՀՈՒՆԻՍԻ 10. – Երևանում տեղի է ունենում մայրաքաղաքի հասարակայնության բազմամարդ ժողովը, Խաղաղության համաշխարհային խորհրդի՝ Ստոկհոլմի կոչը ստորագրելու համար: Կոչի պաշտպանության մասին Հայրապետական խոսքով հանդես է գալիս և կոչի տակ ԻՐ ստորագրությունն է դնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ն:

ՀՈՒՆԻՍԻ 26. – Ոչ-պաշտոնական այցելություն Փարիզ և Ժնև: ՀՈՒԼԻՍԻ 2-ին, Ժնևում, մասնավոր տեսակցություն Մայր Աթոռի բարերար Սարգիս Քյուրքչյանի, տեղի հայոց եկեղեցական վարչության փոխ-ատենապետ Էոժեն Փափազյանի, «Ս.Գրիգոր

Լուսավորիչ» հիմնարկության ներկայացուցիչ Շարլ Փիլիպոսյանին հետ, ՀՈՒԼԻՍԻ 5-ին, այցելություն Ժնևի հայոց «Ս. Հակոբ» եկեղեցի։ ՀՈՒԼԻՍԻ 10-ին, Փարիզում, այցելություն Խորհրդային միության արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆան Չերվենկոյին, ՀՈՒԼԻՍԻ 11-ին, Հայրապետական քարոզ Փարիզի «Ս. Հովհաննես Մկրտիչ» եկեղեցում։ ՀՈՒԼԻՍԻ 12-ին, վերադարձ Մոսկվա, ՀՈՒԼԻՍԻ 13-ին, Մոսկվայում այցելություն Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալներ Պ.Մակարցևին և Վ. Տիտովին, ՀՈՒԼԻՍԻ 14-ին, ժամանում Մայր Աթոռ։

ՕԳՈՍՏՈՍԻ 4. – Մայր Աթոռ են ժամանում ԱՄՆ-ի Եպիսկոպոսական եկեղեցու ներկայացուցիչներ Ջոնաթան Շերմանը, Ռոբերտ Տերվլիգերը, Վիլիամ Նորգրենը և Պոլ Անդերսոնը։ ՕԳՈՍՏՈՍԻ 5-ին, Հայրապետական ընդունելություն և «սիրալիր զրույց եղբայրական ջերմ մթնոլորտում»։ Հյուրերի մեկնում՝ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25. – Մեռոնի օրհնություն և Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալության քսանամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ին, Հայրապետական խոսք Վեհարանում կայացած հանդիսավոր նիստում, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ին, քարոզ Մայր Տաճարում, սրբալույս մեռոնի օրհնության առթիվ։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ին, Եպիսկոպոսական խորհրդակցական ժողովի գումարում Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։ Հանդիսությունների ավարտ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի Հայրապետական երկրորդ կոչը «Խոսք մեր ժողովրդին» խորագրով, ուղղված լիբանանահայությանը։ Տրվում են հայրական հորդորներ տեղացի հայությանը՝ Լիբանանը աղետից փրկելու և բաղձալի խաղաղությունը վերահաստատելու համար։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22. – Հայրապետական այցելություն Շիրակի թեմին, «անձամբ տանելու ԻՐ ողջույնները Կիրովական, Ստեփանավան և Լենինական քաղաքների ԻՐ հոգևոր զավակներին և հավատացյալներին։» Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27. – Մայր Աթոռ է ժամանում ամերիկահայ արձակագիր Վիլյամ Սարոյանը և արժանանում է Հայրապետական ընդունելությանն ու օրհնությանը։

**1977**

ՀՈՒՆՎԱՐԻ 13. – Հայրապետական պաշտոնական այցելություն ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Բաբկեն Սարկիսովին։ «Հայոց Հայրապետի և Հանրապետության մեծահարգ պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց» («Էջմիածին»)։

ՓԵՏՐՎԱՐԻ 20. - Վազգեն Ա. Կաթողիկոսի Կոնդակը՝ Լոնդոնում հիմնադրված «Հայկական երաժշտական ինստիտուտի» գործունեությունն սկսելու առթիվ։ Հայրապետական ողջույններից ու օրհնություններից հետո, ինստիտուտին բարեմաղթվում է աշխատանքային հաջողություն։

ՄԱՐՏԻ 9. – Մայր Աթոռ է ժամանում Մալաբար քույր եկեղեցու հոգևորական գործիչ, Պաուլոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտը։ ՄԱՐՏԻ 10-ին, պաշտոնական տեսակցություն Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հետ, «բացառիկ ջերմ մթնոլորտում»։ Մեկնում՝ ՄԱՐՏԻ 12-ին։

ՄԱՐՏԻ 29. – ՈՒղևորություն Բուխարեստ, Ռումինական Օրթոդոքս եկեղեցու պատրիարք Ժուստինիանի թաղման սգահանդեսին մասնակցելու համար։ ՄԱՐՏԻ 31-ին, Հայրապետական ցավակցական խոսք հանգուցյալի դագաղի առջև, վերադարձ Մայր Աթոռ՝ ԱՊՐԻԼԻ 4-ին։

ՀՈՒՆԻՍԻ 4. – ՈՒղևորություն Մոսկվա, Կրոնական գործիչների Համաշխարհային համաժողովին մասնակցելու համար։ ՀՈՒՆԻՍԻ 6-ին, Հայրապետական ելույթ համաժողովում՝ ֆրանսերեն, «Խոսք խաղաղության» թեմայով։ Վերադարձ՝ ՀՈՒՆԻՍԻ 11-ին։

ՀՈՒՆԻՍԻ 18. – ՈՒղևորություն Բուխարեստ, մասնակցելու Ռումինական Օրթոդոքս եկեղեցու առաջնորդ Տ. Յուստին Պատրիարքի գահակալության

հանդիսությանը։ ՀՈՒՆԻՍԻ 19-ին, Հայրապետական ողջույնի խոսք ռումիներեն, վերադարձ՝ ՀՈՒՆԻՍԻ 22-ին։

ՀՈՒԼԻՍԻ 20. – Մայր Աթոռ է ժամանում ԱՄՆ-ի Եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակությունը Ջոն Մ. Ալինի գլխավորությամբ։ ՀՈՒԼԻՍԻ 21-ին, Հայրապետական ընդունելություն և բանակցություններ բարեկամական մթնոլորտում։ Մեկնում՝ ՀՈՒԼԻՍԻ 22-ին։

ՕԳՈՍՏՈՍԻ 29. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի Կոնդակը Պոլսի Հայոց Հովհաննես Կոլոտ (Բաղիշեցի) պատրիարքի ծննդյան երեքհարյուրամյակի առթիվ։ Պատրիարքի գործունեությունը դրվատաբար ներկայացնելուց հետո, տրվում են հրահանգներ հոբելյանը հավերժացնելու համար։ Ըստ այդմ՝ 1978 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ին, Մայր Տաճարում, տեղի է ունենում հանդիսավոր պատարագ, իսկ Վեհարանում՝ հանդիսություն նվիրված Հովհաննես Կոլոտին։ Այստեղ, օրհնության բովանդակալից խոսքով, հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4. – Վեհափառ Հայրապետի նախագահությամբ՝ հոգեհանգստյան պաշտոն Մայր Տաճարում, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Տիգրանի Գասպարյանի մահվան առթիվ։ Հավարտ պատարագի, Հայրապետական դամբանական խոսք։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29. – Մայր Աթոռ է ժամանում Քենտրբերիի (Անգլիա) արքեպիսկոպոս, դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը, իբրև հյուրը Վեհափառ Հայրապետի։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ին, Հայրապետական ողջույնի խոսք Մայր Տաճարում, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ին, երկու Հայրապետների «Համատեղ հայտարարության» ստորագրումը նվիրված ամբողջ աշխարհում խաղաղության պաշտպանությանը։ Արքեպիսկոպոսի մեկնումը՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական հեռագիրը Նորին Սրբություն Պողոս Զ. Պապին, ծննդյան

ութսունամյակի առթիվ։ Բարեմաղթվում է «ևս բազում տարիներ, լի լուսավոր իրագործումներով, ի մխիթարություն աշխարհի բոլոր քրիստոնյաների»։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14. – ՈՒղևորություն Թբիլիսի, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Տ. Դավիթ Ե.-ի թաղմանը մասնակցելու համար։ Հայրապետական դամբանական խոսք՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ին, վերադարձ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ին։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10. – Ողջույնի գիր Խորհրդային միության մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանին, նրա ծննդյան ութսունամյակի առթիվ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13. – ՈՒղևորություն Զագորսկ, Խորհրդային Միության եկեղեցիների և կրոնական այլ համայնքների ներկայացուցիչների ժողովին մասնակցելու համար։ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ին, ելույթ ժողովում, «ընդդեմ նեյտրոնային ռումբի արտադրության ու գործադրման» վերնագրով, ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ տասնինն եկեղեցիների պետերի հետ միասին «ՈՒղերձ-կոչի» ստորագրում, նվիրված նեյտրոնային ռումբի արգելմանը։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ին։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23. – ՈՒղևորություն Թբիլիսի, մասնակցելու համար Համայն Վրաստանի նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Տ. Իլիայի գահակալության հանդիսությանը։ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ին, Հայրապետական ողջույնի խոսք Մցխեթի վանքում, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ին, պաշտոնական այցելություն Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Պավել Գելաշվիլուն։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ին։

**1978**

ՀՈՒՆՎԱՐԻ 28. – Հայրապետական ուղևորություն արտասահման, այցելելու Իրաքի և Փարիզի հայկական թեմերին։ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ին, Բաղդադում, պաշտոնական այցելություն Իրաքի կառավարության արդարադատության մինիստր Մունդր էլ Շավիին, ՀՈՒՆՎԱՐԻ 31-ին՝ Խորհրդային Միության դեսպան Անատոլի Բարկովսկուն, ՓԵՏՐՎԱՐԻ 8-ին՝ Հայրապետական պատարագ և քարոզ տեղի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցում։ ՓԵՏՐՎԱՐԻ 9-ին, մեկնում Փարիզ, ՓԵՏՐՎԱՐԻ 12-ին՝ Հայրապետական

քարոզ Փարիզի հայկական «Ս. Հովհաննես Մկրտիչ» եկեղեցում, ՓԵՏՐՎԱՐԻ 16-ին, այցելություն Ֆրանսիայում Խորհրդային Միության արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆան Չերվոնենկոյին, ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ այցելություն Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին։ ՓԵՏՐՎԱՐԻ 18-ին՝ մեկնում Փարիզից Մոսկվա, ՓԵՏՐՎԱՐԻ 21-ին՝ վերադարձ Մայր Աթոռ։

ՄԱՐՏԻ 1. – Պաշտոնական այցելություն Երևանում, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Տաճատի Սարգսյանին։ «Հայոց Հայրապետի և պարոն նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց»։

ՄԱՅԻՍԻ 7. – Հանդիսավոր Պատարագ և հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Մայր Տաճարում, ի հիշատակի երգահան Արամ Խաչատրյանի մահվան ութօրեքի։ Դամբանական բովանդակալից խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

ՄԱՅԻՍԻ 12. – Հայրապետական հրավերով Մայր Աթոռ է ժամանում Համայն Վրաստանի նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Տ. Իլիա Երկրորդը։ ՄԱՅԻՍԻ 14-ին, Հայրապետական պատարագ Մայր Աթոռում, ի ներկայության մեծարգո հյուրի, ՄԱՅԻՍԻ 15-ին, երկու Հայրապետների պաշտոնական այցը ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահի տեղակալ Հովհ. Բաղդասարյանին։ Մեծարգո հյուրի մեկնումը՝ ՄԱՅԻՍԻ 16-ին։

ՄԱՅԻՍԻ 19. – Հայրապետական հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Եթովպիայի ՈՒղղափառ եկեղեցու Պատրիարք Աբբա Թեկլե Հայմանոթը։ ՄԱՅԻՍԻ 21-ին, Հանդիսավոր Սուրբ Պատարագ Մայր Տաճարում, որի ընթացքում երկու Հայրապետները հանդես են գալիս եղբայրական բարեմաղթություններով, ՄԱՅԻՍԻ 22-ին, Խաղաղության կոչի համատեղ ստորագրում։ ՆՈՒՅՆ ՕՐԸ, Պատրիարքի մեկնումը Մայր Աթոռից։

ՄԱՅԻՍԻ 24. – ՈՒղևորություն Մոսկվա, Ռուսական Պրավոսլավ եկեղեցու պատրիարքության վերահաստատման վաթսունամյակի հանդիսություններին

մասնակցելու համար։ ՄԱՅԻՍԻ 26-ին, Հայրապետական ելույթ Զագորսկում, ՄԱՅԻՍԻ 29-ին՝ հրաժեշտի խոսք։ ՆՈՒՅՆ ՕՐԸ, վերադարձ Մայր Աթոռ։

ՀՈՒՆԻՍԻ 9. – ՈՒղևորություն Լոնդոն, այցելելու համար հայկական եկեղեցուն և համայնքին, ապա Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կենտրոնի աշխատանքներին մասնակցելու համար։ ՀՈՒՆԻՍԻ 21-ին, Հայրապետական ելույթ Ժնևում, ՀՈՒՆԻՍԻ 22-ին, այցելություն Ժնևի քաղաքապետ Պիեռ Ռոզենին։ Վերադարձ՝ ՀՈՒՆԻՍԻ 27-ին։

ՕԳՈՍՏՈՍԻ 10. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ցավակցական հեռագիրը Հռոմ, Նորին Սրբություն Պողոս Զ. Պապի մահվան առթիվ։

ՕԳՈՍՏՈՍԻ 30. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական հեռագիրը Հռոմ, հաջորդ պապի՝ Նորին Սրբություն Հովհաննես Պողոս Ա.-ի ընտրության առթիվ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19. – Խաղաղության պաշտպանության գործին մատուցած ծառայության և ծննդյան յոթանասունամյակի առթիվ, Վեհափառ Հայրապետը պարգևատրվում է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով։ Շքանշանի հանձնումը Երևանում, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ին, և այդ առթիվ Հայրապետական շնորհակալական խոսք։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30. – Հանդիսություններ Մայր Աթոռում՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ծննդյան յոթանասունամյակին։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին, Հայրապետական Պատարագ և քարոզ Մայր Տաճարում, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ին, այցելություն ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆաղեյ Սարգսյանին և երկուստեք ճառերի փոխանակություն, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ին, Եպիսկոպոսաց Խորհրդակցություն Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։ Հանդիսությունների ավարտ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի օրհնության խոսքը Էջմիածին քաղաքում կանգնեցված՝ 1827 թվականին Օշականի ճակատամարտում զոհված զինվորներին նվիրված հուշարձանի առջև։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2. – Հայրապետական ուղերձ ամերիկահայ արձակագիր Վիլյամ Սարոյանին, նրա ծննդյան յոթանասունամյակի առթիվ։

**1979**

ՓԵՏՐՎԱՐԻ 10. – Հայրապետական ցավակցական հեռագիր Միլան, ազգային բարերար Երվանդ Հյուսիսյանի մահվան առթիվ։ Հանգուցյալը բնութագրվում է որպես «հասարակական ազնիվ, իբրև հոգատար, հարազատ զավակ Մայր Աթոռիս»։

ԱՊՐԻԼԻ 14. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա. - ի «Հայտարարությունը»՝ Ս. Հռիփսիմե վանքի պարսպի տակ հայտնաբերված Հռիփսիմյանց նահատակված կույսերի աճյունների և նրանց պատմա-քրիստոնեական նշանակության մասին։ Գտածոն «մի նոր նյութական վկայություն է հայոց քրիստոնեական հավատքի պատմական վավերականության»։

ՄԱՅԻՍԻ 1. – Հովվապետական այցելություն Ֆրանսիա՝ Փարիզի, Բորդոյի, Նիցցայի, Լիոնի, Սենտ-Էտիենի, Վալանսի և Դեսինի հայկական համայնքներին։ ՄԱՅԻՍԻ 4-ին, Մարսելում, պաշտոնական այցելություն քաղաքագլուխ Գաստոն Դեֆերին, ՄԱՅԻՍԻ 12-ին, Բորդոյում՝ Շաբան Դելմասին, ՄԱՅԻՍԻ 15-ին, Լիոնում՝ նահանգապետ Օլիվյե Ֆիլիպին, ՄԱՅԻՍԻ 21-ին, Դեսինում՝ քաղաքագլուխ Պիեր Մուտենին։ ՀՈՒՆԻՍԻ 7-ին, Փարիզում, ընդունելություն Ֆրանսիական Հանրապետության նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենի մոտ։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒՆԻՍԻ 13-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7. – Հայրապետական այցելություն Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսանդր Կիրակոսյանին։ Տեղի է ունենում «սիրալիր, բարեկամական զրույց, ջերմ մթնոլորտում»։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15. – Հովվապետական այցելություն Բաքվի հավատացյալներին։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ին, Հայրապետական պատարագ և քարոզ Բաքվի «Ս. Հովհաննես Լուսավորիչ» հայկական եկեղեցում, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ին, այցելություն Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Քեմալ Հուսեինովին, Կրոնական գործերի լիազոր Աբդուլլա Ախադովին, Ադրբեջանի Շեյխ ՈՒլ-Իսլամ Հաջի Իբրահիմովին։ Վերադարձ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9. – Հայրապետական Կոնդակ ֆրանսահայ նկարիչ Գառզուին (Գառնիկ Հարությունի Զուլումյան «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվելու առթիվ։ «Ձեր անզուգական նկարչական արվեստը արգասիքն է հայկական ու ֆրանսիական մտածումի և զգայությանց ստեղծարար ուժերու միատեղ ծաղկումին» («Էջմիածին»)։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 26. – Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի ողջույնի և բացման խոսքով, իր աշխատանքներն է սկսում Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի՝ Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովը, որը ներկայացնում էին տարբեր եկեղեցիների շուրջ երեսուն բարձրաստիճան ներկայացուցիչներ։ Աշխատանքների ավարտ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ին։

## 1980

ՓԵՏՐՎԱՐԻ 4. – Վազգեն Ա. Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Լոնդոն, Քենտրբերիի արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսիին «արքեպիսկոպոսության պատմական գահին բարձրանալու առթիվ»։

ԱՊՐԻԼԻ 11. – ՈՒղևորություն Վրաստան հրավերովը Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ.-ի։ ԱՊՐԻԼԻ 12-ին, այցելություն Վրաստանի կրոնական գործերի լիազոր Գ. Մայսուաձեին, ԱՊՐԻԼԻ 14-ին, երկու Հայրապետների այցելությունը Բորժոմիի և Գորիի հավատացյալներին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ԱՊՐԻԼԻ 16-ին։

ՄԱՅԻՍԻ 6. – Վազգեն Ա. Կաթողիկոսի ցավակցական հեռագիրը Երևան, «սգակիր Առաքելյան ընտանիքին», Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, «Էջմիածին» պաշտոնաթերթի երկարամյա խմբագիր, գիտության վաստակավոր գործիչ Առաքել Գևորգի Առաքելյանի մահվան առթիվ:

ՄԱՅԻՍԻ 22. – Հայրապետական Կոնդակ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման վաթսունամյակի առթիվ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4. – Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ասորի Օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն Սեվերիոս Զաքքային, հովվապետական այդ բարձր պաշտոնին ընտրվելու առթիվ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22. – Մայր Աթոռ է ժամանում Ավստրիայի հոգևորականների պատվիրակությունը, արքեպիսկոպոս, կարդինալ Ֆրանց Կյոնիգի գլխավորությամբ: ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ին, այցելություն Վեհափառ Հայրապետին և զրույց, բարեկամական ու փոխադարձ ըմբռնման մթնոլորտում: Պատվիրակության մեկնում Մայր Աթոռից՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ.Վազգեն Ա.-ի գահակալության քսանհինգամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի Կոնդակը Կանադայի հայոց ինքնուրույն թեմական վիճակ կազմելու մասին: Կոչ է արվում տեղի հայությանը «սրտացավ ու շինարար ոգիով իրենց նպաստը բերեն ի խնդիր Կանադայի ինքնավար թեմական կազմակերպության ստեղծման»:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 24. – Երևանում, տեղի է ունենում Հայրենի երկրի հասարակության և սփյուռքահայության համատեղ ժողով, որին իր մասնակցությունն է բերում և Հայրապետական բովանդակալից ելույթով հանդես է գալիս Տ.Տ.Վազգեն Ա. Կաթողիկոսը: Աշխատանքների ավարտ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29. – Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Բաբկեն

Սարկիսովին և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանին, Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման վաթսունամյակի առթիվ:

**1981**

ՀՈՒՆՎԱՐԻ 15. – Հայրապետական այցելություն Երևանում, Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ Ֆադեյ Տաճատի Սարգսյանին: Տեղի է ունենում «ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում»:

ՓԵՏՐՎԱՐԻ 19. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, «սգակիր տիկին Հակոբյանին», նրա ամուսնու՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախկին անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր Գրիգոր Արշակի Հակոբյանի մահվան առթիվ:

ՄԱՐՏԻ 29. – Մայր Աթոռ են ժամանում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ղեկավարներ, Վերապատվելի Ահարոն Սափսըզյանը և դոկտ. Հովարդ Միլսը, որոնք ՄԱՐՏԻ 30-ին, ողջունում են Վեհափառ Հայրապետին: «Զրույցն անցավ եղբայրական ջերմ ու սրտագին մթնոլորտում»: Հյուրերի մեկնումը՝ նույն օրը:

ԱՊՐԻԼԻ 20. – Հովվապետական այցելություն Վիեննայի, Մյունխենի, Մայնի Ֆրանկֆուրտի և Փարիզի հայկական եկեղեցական համայնքներին: ԱՊՐԻԼԻ 22-ին, ժամանում Վիեննա, ընդունելություն Վիեննայի արքեպիսկոպոս Ֆրանց Քյոնիգի մոտ և ողջույնի ճառերի փոխանակում: ԱՊՐԻԼԻ 23-ին, Հայրապետական այցելություն Ավստրիայի Հանրապետության նախագահ դոկտ. Ռուդոլֆ Կիրխշլեգերին և ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ Վիեննայի հայկական Մխիթարյան Միաբանությանը: ԱՊՐԻԼԻ 24-ին, այցելություն Ավստրիայի արտաքին գործերի մինիստր դոկտ. Վիլլեբալդ Փահերրին, ՆՈՒՅՆ ՕՐԸ, քաղաքի հայոց «Ս. Հռիփսիմե» եկեղեցում հոգեհանգստյան մասնավոր պաշտոնի կատարում Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին: ԱՊՐԻԼԻ 26-ին, Հայրապետական Ս. Պատարագ և քարոզ քաղաքի «Ս. Ստեփանոս» Մայր Տաճարում: ՄԱՅԻՍԻ 1-ին, մեկնում Մյունխեն, ՄԱՅԻՍԻ 2-ին, Մյունխենի արքեպիսկոպոսարանում հանդիպում կարդինալ Ժոզեֆ Ռացինգերի հետ, ՄԱՅԻՍԻ 3-ին, Հայրապետական

օրհնության խոսք տեղի հայությանը։ ՄԱՅԻՍԻ 5-ին, ժամանում Ֆրանկֆուրտ, ՄԱՅԻՍԻ 7-ին, Ֆրանկֆուրտում, այցելություն փոխքաղաքապետ դոկտոր Գերհարդին։ ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ այցելություն Գյոթեի տուն-թանգարան։ ՄԱՅԻՍԻ 8-ին, մեկնում Փարիզ։ ՄԱՅԻՍԻ 9-ին, Փարիզում հանդիսություն նվիրված Հ.Բ.Ը. Միության հիմնադրման յոթանասունհինգամյակին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և Հայրապետական խոսք այդ առթիվ, ուղղված միությանը և նրա նախագահ Ալեք Մանուկյանին։ ՄԱՅԻՍԻ 10-ին, Հայրապետական քարոզ Փարիզի «Ս. Հովհաննես-Մկրտիչ» հայկական եկեղեցում, ՄԱՅԻՍԻ 22-ին, այցելություն Խորհրդային Միության դեսպան Ստեֆան Չերվոնենկոյին, ՄԱՅԻՍԻ 24-ին, հրաժեշտի քարոզ Փարիզի Մայր Եկեղեցում և Հայրապետական հոգեհանգիստ Վիլյամ Սարոյանի հիշատակին։ ՄԱՅԻՍԻ 25-ին, ժամանում Մոսկվա, ՀՈՒՆԻՍԻ 1-ին, Մոսկվայում, Պիմեն պատրիարքի հրավերով, այցելություն Զագորսկ, Նորին Սրբության գահակալության տասնամյակին նվիրված հանդիսություններին մասնակցելու համար։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒՆԻՍԻ 2-ին։

ՄԱՅԻՍԻ 14. - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի վշտակցական հեռագիրը Փարիզից Վատիկան, Կարդինալ Կասարոլիին՝ Նորին Սրբություն Հովհաննես Պողոս Բ. Պապի դեմ մահափորձ կատարելու առթիվ։ «Անմարդկային այս արարքը մեծագույն ողբերգություններից մեկն ենք նկատում մեր օրերի տառապող աշխարհի» («Էջմիածին»)։

ՀՈՒՆԻՍԻ 24. – Հայրապետական Կոնդակ Կ. Պոլսո Հայոց Հակոբ Նալյան պատրիարքի ծննդյան երկուհարյուրհիսունամյակի առթիվ։ Պատրիարքը բնութագրված է որպես «եկեղեցական կյանքի կազմակերպիչ, հզոր ոգի, բանիմաց քարոզիչ, մանկավարժ և մատենագիր»։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16. – Հայրապետական Կոնդակ Պոլսի «Սուրբ Փրկիչ» ազգային հիվանդանոցի հաստատման հարյուրհիսուամյակի առթիվ։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22. – Մայր Աթոռում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Հայ եկեղեցու սահմանադրության նոր նախագծի կազմության հանձնաժողովը։ Աշխատանքների ավարտ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ին։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25. – Մայր Աթոռ է ժամանում Անտիոքի և Համայն Արևելքի հույն Օրթոդոքս եկեղեցու առաջնորդ, Ամենապատիվ Տ. Իգնատիոս սրբազան Պատրիարքը։ ՆՈՒՅՆ ՕՐԸ, Մայր Տաճարում, Ս. Պատարագ և Հայրապետական բարի գալուստի խոսք, ապա և՝ մեծարգո հյուրի շնորհակալությունը։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ին, «Անի» հյուրանոցում, պաշտոնական բանակցություններ ջերմ մթնոլորտում, մեկնում՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ին։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20. – Վեհափառ Հայրապետը Վեհարանի Հանդիսությանց դահլիճում ընդունում է Բուխարեստի «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարանի իր քառասունհինգ նախկին աշակերտ-աշակերտուհիներին։ «Հանդիպումն անցնում է ջերմ ու հուզիչ մթնոլորտում» («Էջմիածին»)։

**1982**

ՄԱՐՏԻ 8. – Մայր Աթոռում Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի բացման աղոթքով, իր աշխատանքներն է սկսում Խաղաղության Քրիստոնեական կոնֆերանսի՝ Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովը։ ՄԱՐՏԻ 11-ին Հայրապետական ելույթ հանձնաժողովում, աշխատանքների ավարտ՝ մարտի 12-ին։

ՄԱՐՏԻ 15. – Հայրապետական ցավակցական գիր Մատենադարանի տնօրեն, գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանի մահվան առթիվ։ «Իբրև հմուտ հայագետ, իբրև հայրենաշունչ գիտնական, իբրև առաքինի մարդ, անկրկնելի էր հանգուցյալը»։

ՄԱՅԻՍԻ 10. – Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի հրավերով, ուղևորություն Մոսկվա, Խաղաղության պաշտպանության կրոնական գործիչների համաշխարհային համագումարին մասնակցելու համար։ ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ Հայրապետական ելույթ համագումարում (ֆրանսերեն)։ ՄԱՅԻՍԻ 14-ին, Աշխարհի խաղաղությանը

նվիրված չորս փաստաթղթերի ստորագրում, մյուս հոգևոր պետերի հետ մեկտեղ։ ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ վերադարձ Մայր Աթոռ։

ՀՈՒՆԻՍԻ 7. – Վազգեն Կաթողիկոսի ողջույնի և օրհնության հեռագիրը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին, Գլխավոր ասամբլեայի զինաթափմանը նվիրված նստաշրջանի բացման առթիվ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7. – Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Համայն Անգլիական եկեղեցու ներկայացուցիչ Հենրի Հիլլ եպիսկոպոսը և պրոֆ. Դոնալդ Շուրմանը։ Մեկնում՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24. – Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Անտիոքի և Համայն Արևելքի Ասորական ՈՒղղափառ եկեղեցու պետ, Տ. Իգնատիոս Զաքքա Ա. Պատրիարքը։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ին, Մայր Տաճարում՝ հանդիսավոր Սուրբ Պատարագի մատուցում երկու Հայրապետների մասնակցությամբ, մեծարգո հյուրի մեկնումը՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23. – Հայրապետական ցավակցական հեռագիր տիկին Անահիտ Հարությունյանին, Խորհրդային Միության Մարշալ, Խորհրդային Միության հերոս Հովհաննես Քրիստափորի (Խաչատուրի) Բաղրամյանի մահվան առթիվ։ «Հայ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի հպարտ է մարշալ Բաղրամյանով»։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2. – Մայր Աթոռ են ժամանում Սփյուռքահայերի քսանհինգ հոգուց բաղկացած բարերարների խումբը, ազգային բարերար Ալեք Մանուկյանի գլխավորությամբ, որպես հրավիրյալ հյուրերը Վեհափառ Հայրապետի։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ին, «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատան հանդիսավոր բացումը և Հայրապետական ողջույնի խոսք այդ առթիվ, ապա և՝ ճոխ հանդիսություն։ Հյուրերի մեկնումը՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ին։

## 1983

ՀՈՒՆՎԱՐԻ 13. – Հայրապետական ցավակցական հեռագիր պատմական գիտությունների դոկտոր, Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հայկ Գրիգորի Մելքոնյանի մահվան առթիվ։

ՄԱՐՏԻ 31. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Գերմանիայի Ավետարանական եկեղեցու պատվիրակությունը, Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի փոխ-նախագահ, դոկտ. Գերհարդ Բասարակի գլխավորությամբ։ ԱՊՐԻԼԻ 1-ին, Հայրապետական ընդունելություն Վեհարանում և «մտերմիկ զրույց», ԱՊՐԻԼԻ 3-ին, Հայրապետական հանդիսավոր Պատարագ Մայր Տաճարում, հյուրերի ներկայությամբ։ Պատվիրակության մեկնում՝ ԱՊՐԻԼԻ 7-ին։

ՄԱՅԻՍԻ 3. – ՈՒղևորություն Լոնդոն և Փարիզ, տեղի հայկական համայնքներին այցելություն տալու համար։ ՄԱՅԻՍԻ 6-ին ժամանում Լոնդոն, հանդիպում Քենտրբերիի արքեպիսկոպոս, դոկտ. Ռոբերտ Ռանսիի հետ և ողջույնի ճառերի փոխանակում։ ՄԱՅԻՍԻ 8-ին, Հայրապետական Պատարագ և քարոզ Լոնդոնի հայկական «Ս.Պետրոս» եկեղեցում, ՄԱՅԻՍԻ 15-ին՝ նույն քաղաքի «Ս. Սարգիս» եկեղեցում։ ՄԱՅԻՍԻ 17-ին, մեկնում Լոնդոնից Փարիզ, ՄԱՅԻՍԻ 19-ին, Փարիզում, հարցազրույց Ֆրանսիական «Ֆիգարո» թերթի թղթակցի հետ, ՄԱՅԻՍԻ 24-ին, Հայրապետական ողջույնի խոսք Փարիզի կառավարական տանը, Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին «Պատվո լեգեոնի շքանշան» տալու առթիվ։ ՄԱՅԻՍԻ 25-ին, Հայոց Հայրապետին է այցելում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար, դոկտ. Ֆիլիպ Փոթերը, ՄԱՅԻՍԻ 26-ին, Հայրապետական այցելություն Ֆրանսիայում Խորհրդային Միության դեսպան Յուրի Վորոնցովին։ ՄԱՅԻՍԻ 29-ին, Հայրապետական Ս. Պատարագ և քարոզ Փարիզի «Ս. Հովհաննես Մկրտիչ» հայկական եկեղեցում, ՄԱՅԻՍԻ 31-ին, պաշտոնական այցելություն Փարիզի արքեպիսկոպոս, կարդինալ Ժան-Մարի Լյուստիժեին։ ՀՈՒՆԻՍԻ 1-ին մեկնում Մոսկվա, ՀՈՒՆԻՍԻ 4-ին, վերադարձ Մայր Աթոռ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4. – Հայրապետական քարոզ Մայր Տաճարում, Պատարագ և հոգեհանգիստ, նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ասատուր Շմավոնի Մնացականյանի հիշատակին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վլադիմիր Կուրոյեդովի շնորհավորական հեռագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ին, նրա ծննդյան յոթանասունհինգամյակի առթիվ։ «Հանդիսանալով նշանավոր կրոնական գործիչ, Դուք շատ ժամանակ եք տրամադրում ժողովուրդների միջև բարեկամության և վստահության ամրապնդման գործին, միջուկային սպառնալիքի դեմ պայքարին»։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27. – Վեհարանի Հանդիսությանց դահլիճում, տեղի է ունենում Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի ծննդյան յոթանասունհինգամյակին, քահանայագործության քառասնամյակին և գահակալության քսանութերորդ տարեդարձին նվիրված հանդիսություն։ Ողջույնի խոսքով հանդես են գալիս Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, Անգլիկան Եկեղեցու հոգեշնորհ կանոնիկոս Վիկտոր դը Վաալը և ուրիշներ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29. – Ծննդյան յոթանասունհինգամյակի և խաղաղության պաշտպանության գործում մատուցած անձնվեր ծառայության համար Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը պարգևատրվում է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության պատվոգրով։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10. – Հայրապետական Կոնդակ ֆրանսիացի հայագետ, պրոֆ. Ֆրեդերիկ Արման Ֆեյդիին, «Ս. Սահակ և Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվելու առթիվ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17. – Հայրապետական Կոնդակ խորհրդահայ նկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի Ակադեմիայի իսկական անդամ, Էջմիածնի ճարտարապետական հանձնաժողովի նախագահ Գրիգոր Սեպուհի Խանջյանին, «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվելու առթիվ։ Խանջյանի «իրագործումները» բնութագրված են որպես «արվեստի կոթողային գործեր» («Էջմիածին»)։

**1984**

ՀՈՒՆՎԱՐԻ 20. – Հայրապետական Կոնդակ Կոստանդնուպոլսի Տ. Զաքարիա Պատրիարք Կաղզվանցու ծննդյան 265-ամյակը նշելու մասին։ Այս առթիվ տրվում են կոնկրետ հանձնարարականներ։

ՓԵՏՐՎԱՐԻ 12. – Հայրապետական ցավակցական խոսք Մայր Տաճարում, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Յուրի Անդրոպովի մահվան առթիվ։

ՄԱՐՏԻ 16. – Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, հայ գրականության դասական Հովհաննես Շիրազի (Հովհաննես Թադևոսի Կարապետյան) մահվան առթիվ։ ՄԱՐՏԻ 25-ին, Մայր Տաճարում, Պատարագ և հոգեհանգստի արարողություն նվիրված հանգուցյալ բանաստեղծին, որի մասին քարոզով հանդես է գալիս Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը։

ԱՊՐԻԼԻ 20. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի Կոնդակը Կոստանդնուպոլսի Տ. Ներսես պատրիարք Վարժապետյանի մահվան հարյուրամյակը նշելու մասին։ Պատրիարքը բնութագրված է որպես «լայնախոհ, գաղափարապաշտ և պարզասեր հոգևորական, իր ժամանակի հոգևորական ակնառու դեմքերից մեկը»։

ԱՊՐԻԼԻ 25. – Հովվապետական այցելություն Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Ֆրանսիայի հայկական թեմերին։ ԱՊՐԻԼԻ 29-ին, ժամանում Փարիզ։ ՆՈՒՅՆ ՕՐԸ, Ալֆորվիլում, մասնակցություն Մեծ Եղեռնի զոհերին նվիրված հուշարձանի բացմանը, ապա՝ այցելություն քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկիին։ ԱՊՐԻԼԻ 30-ին, ժամանում Բոյենոս-Այրես (Արգենտինա), ՆՈՒՅՆ ՕՐԸ Հայրապետական օրհնության խոսք «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հայկական եկեղեցում։ ՄԱՅԻՍԻ 1-ին, իբրև

պատվավոր հյուր, ներկայություն Արգենտինայի Հանրապետության Խորհրդարանի բացման նիստին, ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ այցելություն Ֆլորենսի հայկական «Ս. Խաչ» եկեղեցի և Հայրապետական օրհնության խոսք այնտեղ։ ՄԱՅԻՍԻ 4-ին, հանդիպում Բոյենոս-Այրեսի արքեպիսկոպոս, կարդինալ Խուան Կառլոս Արամբուրույի հետ, ՄԱՅԻՍԻ 6-ին, Հայրապետական հանդիսավոր պատարագ և քարոզ տեղի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցում։ ՄԱՅԻՍԻ 8-ին, այցելություն Արգենտինայում Խորհրդային Միության դեսպան Օլեգ Կլասովին, ապա՝ Հանրապետության փոխնախագահ Վիկտոր Մարտինեսին, ՄԱՅԻՍԻ 10-ին, Հանրապետության պրեզիդենտ դոկտ. Ռաուլ Ալֆոնսինին։ ՄԱՅԻՍԻ 11-ին, ժամանում Մոնտեվիդեո (Ուրուգվայ), ՄԱՅԻՍԻ 13-ին, Հայրապետական պատարագ Մոնտեվիդեոյի հայոց «Ս.Ներսես Շնորհալի» եկեղեցում, ՄԱՅԻՍԻ 14-ին, այցելություն Ուրուգվայի Հանրապետության պրեզիդենտ Գրեգորիս Ալվարեսին։ ՄԱՅԻՍԻ 23-ին, մեկնում Սան-Պաուլո (Բրազիլիա), ՄԱՅԻՍԻ 24-ին, Բրազիլիայի մայրաքաղաք Բրազիլիայում այցելություն նահանգապետ Ջուլե Օռնելլասին և Հանրապետության փոխնախագահ Սուրելիանո Շավես դե Մենդոնային։ ՄԱՅԻՍԻ 31-ին, ժամանում Ռիո դե Ժանեյրո, ՀՈՒՆԻՍԻ 1-ին, այցելություն փոխ-նահանգապետ Դարսի Ղիբերոյին, ՀՈՒՆԻՍԻ 2-ին, մեկնում Փարիզ։ ՀՈՒՆԻՍԻ 4-ին, Փարիզում, հանդիպում քաղաքագլուխ Ժակ Շիրակի հետ և «շուրջ քառասունհինգ ռոպե տևող բարեկամական զրույց»։ ՀՈՒՆԻՍԻ 13-15-ը՝ անձնական հանդիպումներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ.-ի հետ։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒՆԻՍԻ 19-ին։

ՀՈՒԼԻՍԻ 18. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի շնորհավորական հեռագիրը Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար, դոկտ. Էմիլիո Կաստրոյին, այդ պաշտոնում նրա ընտրվելու առթիվ։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12. – Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պետ Տ. Յանիս Մատուլիս արքեպիսկոպոսը և արժանանում Հայրապետական ընդունելության։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ին, Մայր Տաճարում, Հայրապետական պատարագ ի ներկայության բարձրապատիվ հյուրի։ Արքեպիսկոպոսի մեկնում՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 24. – Հայրապետական այցելություն Թբիլիսի, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ.-ին։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ին, Հայրապետական պատարագ և քարոզ Թբիլիսիի հայկական «Ս. Գևորգ» եկեղեցում, ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ին, հանդիպում Վրացական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր Ա. Ցիկլաուրու հետ։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ին։

**1985**

ՀՈՒՆՎԱՐԻ 3. – Հայրապետական Կոնդակ երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միության տարած հաղթանակի քառասունամյակի առթիվ։ Հրահանգվում է մայիսի 9-ի մոտակա կիրակին հայկական բոլոր եկեղեցիներում «սուրբ պատարագի և հավուր պատշաճի քարոզի մատուցմամբ, հոգեհանգստյան արարողություններ կատարել»։

ՀՈՒՆՎԱՐԻ 14. – Հայրապետական այցելություն Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանին։ Տեղի է ունենում «ջերմ զրույց, ամանորյա փոխադարձ բարեմաղթություններով»։

ԱՊՐԻԼԻ 16. – ՈՒղևորություն Մոսկվա, ԽՍՀՄ Եկեղեցական և Կրոնական հարանվանությունների պետերի և ներկայացուցիչների համաժողովին մասնակցելու համար։ ԱՊՐԻԼԻ 18-ին, ելույթ Զագորսկում, նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտի քառասունամյակին, վերադարձ Մայր Աթոռ, ԱՊՐԻԼԻ 20-ին։

ՄԱՅԻՍԻ 11. – Երևանում, տեղի է ունենում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հանդիսավոր պլենումը, նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտի քառասունամյակին։ Պլենումին իր Հայրապետական մասնակցությունն է բերում և ելույթով հանդես է գալիս Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ն։

ՀՈՒՆԻՍԻ 4. – Հայրապետական Կոնդակ Շվեյցարիայի հայոց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հաստատությանը, Ժնևի հայկական «Սուրբ Հակոբ» եկեղեցուն կից «Հայ կենտրոն» հիմնելու առթիվ։

ՀՈՒԼԻՍԻ 3.- Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի Կոնդակը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության նախագահ, դոկտ. Ազերեդո Պետտիգանին, Գալուստ Կյուլպենկյանի մահվան երեսնամյակի առթիվ։

ՀՈՒԼԻՍԻ 22. – ՈՒղևորություն Մոսկվա, մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի ծննդյան յոթանասունհինգամյակի հանդիսություններին։ ՀՈՒԼԻՍԻ 23-ին, Զագորսկում, հոբելյանին նվիրված Հայրապետական ողջույնի խոսք, վերադարձ՝ ՀՈՒԼԻՍԻ 27-ին։

ՕԳՈՍՏՈՍԻ 21. – Հայրապետական ցավակցական հեռագիր Ռիգա, Լատվիայի Ավետարանական լութերական եկեղեցու պետ, դոկտոր Յանիս Մատուլիս արքեպիսկոպոսի մահվան առթիվ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի գահակալության երեսնամյակին նվիրված հանդիսությունների սկիզբը Մայր Աթոռում։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ին, Հայրապետական մաղթանք և Պատարագ Մայր Տաճարում, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ին, հոբելյանական հանդիսավոր նիստ Վեհարանի Հանդիսությանց դահլիճում և Հոբելյարի շնորհավորական ելույթ-պատգամը։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին, ընդունելություն ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի մոտ և վերջինիս ջերմ շնորհավորանքները Նորին Ս. Օծությանը։ ՀՈԿՏԵՄԲԵԻ 2-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, եպիսկոպոսական խորհրդակցություն Մայր Աթոռում և եկեղեցու այժմեական խնդիրներն արծարծող «Հայտարարության» ստորագրում։ Հանդիսությունների ավարտ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26. – Ի նշանավորումն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի գահակալության երեսնամյակի, Վեհարանի Հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում «Վարդանանք» գոբելենի հանդիսավոր բացումը։ Հեղինակ՝ Գրիգոր Խանջյան, մեկենաս՝ Վիոլետա Արսլանյան, գործող վարպետներ՝ Օլիվյե և Ֆրանսուա Պենտոն եղբայրներ։ Արարողության վերջում, Հայրապետական խոսք գոբելենի պատմական իմաստի ու նշանակության մասին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14. – Հայրապետական շնորհավորական ուղերձ Ժնևում գումարված՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կրոնական գործիչների հանդիպմանը։ Հույս է հայտնվում, որ «ամուր հիմք դրվի այնպիսի համաձայնության, որն ապահովի մեծ ու փոքր տերությունների համագործակցությունը ամբողջ աշխարհում»։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9. – Վազգեն Ա. Կաթողիկոսի շնորհավորական հեռագիրը Հրանտ Ոսկանյանին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ ընտրվելու առթիվ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24. – Մայր Աթոռում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը, նվիրված Վենետիկի Մխիթարյան միաբանությանը տարերային աղետի՝ ջրհեղեղի հետևանքով պատճառված վնասներին։ Որոշվում է որպես օգնություն, միաբանությանը տրամադրել քսանհինգ հազար դոլարի նպաստ։

**1986**

ՓԵՏՐՎԱՐԻ 10. – Հայրապետական Կոնդակ Հալլեի (ԳԴՀ) «Մարտին Լյութերի» անվան համալսարանի տնօրինությանը, գերմանացի արևելագետ, հայապահպան գործիչ, հոգևորական Հովհաննես Լեփսիուսի ծննդյան վաթսունամյակը նշելու առթիվ։

ՓԵՏՐՎԱՐԻ 20. – Հայրապետական Կոնդակ Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության վաթսունամյակի առթիվ։ «Լուսատու փարոսներից մին հանդիսացավ Մելքոնյան կրթական հաստատությունը, որպես հայկազյան միշտ հաղթող ոգու փայլատակում»։

ՄԱՐՏԻ 28. – Հայրապետական մասնակցություն և ընդարձակ ելույթ Երևանում գումարված՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի երկրորդ համաժողովին։ «Նորին Սրբությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ողջույնը բերեց համաժողովին, ընդգծեց, որ այսօր հայ ժողովուրդը Մասիսի փեշերին ունի իր բարգավաճող հայրենիքն ու ազգային պետությունը»։

ԱՊՐԻԼԻ 4. – Այցելություն Փարիզ, տեղի հայկական համայնքի հետ կապված մի քանի հարցերի կարգավորման առիթով։ Վերադարձ՝ ԱՊՐԻԼԻ 22-ին։

ԱՊՐԻԼԻ 18. – Հայրապետական օրհնության խոսք Փարիզում իր աշխատանքներն սկսած Ֆրանսիայի բժիշկների համագումարին։

ՄԱՅԻՍԻ 17. – Վեհափառ Հայրապետի օրհնության Կոնդակը գրական-մշակութային գործիչ, բանաստեղծ, խմբագիր, գրաքննադատ Վահե Վահյանին (Սարգիս Հակոբի Աբդալյան), ծննդյան յոթանասունհինգամյակի առթիվ։

ՄԱՅԻՍԻ 21. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ցավակցական հեռագիրը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Ա.Ա. Գրոմիկոյին, Չերնոբիլի ատոմակայանում տեղի ունեցած վթարի առթիվ։ Տեղեկացվում է, որ Մայր Աթոռը աղետյալների օգտին տրամադրել է հարյուրհիսուն հազար ռուբլի։

ՀՈՒԼԻՍԻ 14. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նամակը Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանին, միջուկային պատերազմի արգելման, ընդհանուր զինաթափման, աշխարհում խաղաղ գոյակցությունը տևականորեն հաստատելու մասին։

ՕԳՈՍՏՈՍԻ 1. – Հայրապետական ցավակցական հեռագիր Բուխարեստ, պատրիարքական տեղապահ Թեոկրիստ միտրոպոլիտին, Ռումինական Օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Ժուստինի մահվան առթիվ։ «Պատրիարքը հանդիսանում էր մեր ժամանակակից ՈՒղղափառ Եկեղեցու պայծառ ղեկավարներից մեկը»։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի պաշտոնական այցելությունը Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17. – ՈՒղևորություն Զագորսկ, Խորհրդային Միությունում գործող եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների պետերի և ներկայացուցիչների երկրորդ հավաքին մասնակցելու համար։ Հայրապետական ելույթ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ին, վերադարձ Մայր Աթոռ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ին։

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի դրվատական ուղերձը Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ. Պապին, Ֆրանչիսկոս Ասսիզացու ծննդավայրում քրիստոնեական եկեղեցիների համատեղ աղոթքի օր («Խաղաղության աղոթքի օր») կազմակերպելու մասին։

**1987**

ՀՈՒՆՎԱՐԻ 5. – Հայրապետական այցելություն Երևանում, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանին։

ՓԵՏՐՎԱՐԻ 10. – Հայրապետական ցավակցական հեռագիր Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ.-ին, Վրացական ԽՍՀ-ում պատահած տարերային աղետի վերաբերյալ, «որը մեծ նյութական վնասներ է պատճառել և խլել մարդկային զոհեր»։ Տեղեկացվում է, որ Մայր Աթոռը աղետյալներին օգնելու համար տրամադրել է հարյուր հազար ռուբլի։

ՓԵՏՐՎԱՐԻ 11. – ՈՒղևորություն Մոսկվա, «Հանուն միջուկազերծ աշխարհի, հանուն մարդու վերապրումի» կարգախոսն ունեցող Միջազգային ժողովին մասնակցելու համար։ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ին, այցելություն Մոսկվայի հայկական եկեղեցի, որտեղ և՝ հավարտ պատարագի, ողջույնի խոսք հավատացյալներին։ ՆՈՒՅՆ ՕՐԸ, Հայրապետական ելույթ համաժողովում, «Մեր աստվածը խաղաղության աստված է» բնաբանով։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՓԵՏՐՎԱՐԻ 18-ին։

ՄԱՐՏԻ 4. – Մայր Աթոռում, Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաք, նվիրված Մոսկվայում կայացած Միջազգային համաժողովին։ Ընդարձակ ելույթով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

ԱՊՐԻԼԻ 28. – Վազգեն Ա. Կաթողիկոսի հարցազրույցը Խորհրդային Միությունում հավատարմագրված արտասահմանյան տասներկու երկրների լրագրողների խմբի հետ։ «Հարցազրույցը շոշափեց Հայ եկեղեցու այսօրվա վիճակը, հայրենիք-սփյուռք կապերը, 1915 թվականի հայկական ցեղասպանությունը և այլ հարցեր»։

ՄԱՅԻՍԻ 16. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի դիմումնագիրը Ստրասբուրգ (Ֆրանսիա) Եվրոպական Պառլամենտի նախագահ, լորդ Փլամպ Քոլշիլին և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար, Հայր Էմիլիո Կաստրոյին, 1915-1916 թվականների հայկական ցեղասպանությունը միջազգային մակարդակով ճանաչելու մասին։

ՀՈՒՆԻՍԻ 6. – Մայր Աթոռ է ժամանում Անտիոքի և Համայն Արևելքի հույն Կաթոլիկ Եկեղեցու պետ Մաքսիմոս Ե. Հաքիմ Պատրիարքը։ ՀՈՒՆԻՍԻ 7-ին, երկու հոգևոր առաջնորդների համատեղ էկումենիկ աղոթքը Մայր Տաճարում և Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի բարիգալստյան խոսքը։ Մեծարգո հյուրի մեկնումը՝ ՀՈՒՆԻՍԻ 9-ին։

ՀՈՒՆԻՍԻ 12. – Մայր Աթոռում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի բացման խոսքով, իր աշխատանքներն է սկսում Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի «Մերձավոր Արևելք» ենթահանձնաժողովի տարեկան նստաշրջանը։ Աշխատանքների ավարտ՝ ՀՈՒՆԻՍԻ 16-ին։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Էջմիածին քաղաքում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի նախագահությամբ, տեղի է ունենում բազմամարդ հանդիսություն, նվիրված քաղաքի «Ս. Մարիամ Աստվածածին» եկեղեցու նորակառույց զանգակատան բացմանը։ Հանդիսությունից հետո՝ Հայրապետական օրհնության խոսք։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5. – Հայրապետական այցելություն Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի հայկական եկեղեցական համայնքներին։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ին, մեկնում Նյու-Յորք։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ին, Հայրապետական օրհնության խոսք Նյու-Յորքի «Ս. Վարդան» հայկական եկեղեցում, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ին, Նյու-Յորքի քաղաքապետ Էդուարդ Քոչի այցելությունը Վեհափառին։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ին, պաշտոնական այցելություն Միավորված Ազգերի Կազմակերպություն և Հայրապետական ելույթ դեսպանների հետ հանդիպման ժամանակ, ՆՈՒՅՆ ՕՐԸ, հանդիպում ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պերես դե Կուելյարի հետ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ին, Հայրապետական Ս. Պատարագ և քարոզ Նյու-Յորքի Սենտ Ջոն դը Դիվայն մայր տաճարում։ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ին, Վաշինգտոնում, հանդիպում ԱՄՆ-ի պրեզիդենտ

Ռոնալդ Ռեյգանի հետ, ՆՈՒՅՆ ՕՐԸ, Հայրապետական խոսք Վաշինգտոնի հայկական «Ս. Աստվածածին» եկեղեցում։ ՓԵՏՐՎԱՐԻ 31-ին այցելություն Հ.Բ.Ը.Մ.-ի կենտրոն և հանդիպում Ազգային բարերար Ալեք Մանուկյանի հետ։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-ին, ժամանում Լոս-Անջելոս, ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ին, հանդիպում Կալիֆորնիայի նահանգապետ Ջորջ Դեոքմեջյանի հետ և Հայրապետական ուղերձ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ին, Հայրապետական բացօթյա պատարագ և քարոզ Լոս-Անջելոսի «Հոլիվուդ բոլ» հանդիսավայրում, ի ներկայության տասնհինգ հազար հայերի։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ին, ժամանում Սան-Ֆրանցիսկո, ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ին՝ Տորոնտո (Կանադա), ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ին՝ Մոնրեալ։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռեյգանի շնորհավորական նամակը Վեհափառին, իրենց հանդիպման կապակցությամբ։ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ին՝ ժամանում Մոսկվա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ին՝ վերադարձ Մայր Աթոռ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5. – Մայր Աթոռ է այցելում Ավստրալիայի արտաքին գործերի և արտաքին առևտրի մինիստր Ռիիլիամ Հեյդենը։ Հայրապետական ընդունելության ժամանակ տեղի է ունենում զրույց փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի մասին։ Մեկնում՝ նույն օրը։

**1988**

ՓԵՏՐՎԱՐԻ 25. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի հեռագիրը ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին, Լեռնային Ղարաբաղի ստատուսի արդարացի լուծման մասին։ «Խնդրում ենք ձեզ, որ Լեռնային Ղարաբաղի հարցը Հայաստանին միանալու վերաբերյալ, արդար և օրինավոր լուծում ստանա»։

ՓԵՏՐՎԱՐԻ 28. – Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը Մայր Աթոռում ընդունում է ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու Վ. Դոլգիխին և ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Լուկիանովին։ «ՈՒշադրության առնվեցին Ղարաբաղում ստեղծված կացության պատճառները՝ ազգային, տնտեսական և մշակութային առումով»։

ՄԱՐՏԻ 13. – Վազգեն Ա. Կաթողիկոսի Հայրապետական խոսքը Մայր Տաճարում, Սումգայիթի զոհերի հիշատակին նվիրված հանդիսավոր հոգեհանգստի ժամանակ։

«Մենք ողբում ենք մահը բոլոր զոհյալների՝ անպաշտպան խաղաղ բնակիչներ, աշխատավոր մարդիկ, նաև կանայք և երեխաներ, անսպասելի կերպով մութ գիշերին ենթարկված հարձակումների ու խոշտանգումների»։

ԱՊՐԻԼԻ 4. – Հայաստան է գալիս ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Կոնստանտին Խարչևը։ ԱՊՐԻԼԻ 5-ին, ընդունելություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի մոտ և երկու ժամ տևող զրույց Ղարաբաղյան տագնապի կապակցությամբ։

ՄԱՅԻՍԻ 2. – Հայրապետական մասնակցություն Ռոստովում գումարված՝ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետների ժողովին, ՄԱՅԻՍԻ 4-ին, Հայրապետական ելույթ ժողովում։ ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի հավատացյալներին ուղղված ուղերձի ստորագրում, տարբեր դավանությունների համայնքների հինգ հոգևոր պետերի հետ միասին։ Վերադարձ Մայր Աթոռ՝ ՄԱՅԻՍԻ 4-ին։

ՄԱՅԻՍԻ 19. – Մայր Աթոռում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքային գործունեությունն է սկսում Ռուս պրավոսլավ եկեղեցու հազարամյակին նվիրված գիտական նստաշրջանը։ ՆՈՒՅՆ ՕՐԸ՝ Հայրապետական ողջույնի խոսք նվիրված նստաշրջանի բացմանը, ՄԱՅԻՍԻ 20-ին, Վեհափառ Հայրապետի պատգամ-ելույթը նստաշրջանն ավարտվելու առթիվ։

ՀՈՒՆԻՍԻ 4. – Հայրապետական ուղևորություն Մոսկվա, մասնակցելու համար Ռուս պրավոլավ եկեղեցու հազարամյակին նվիրված հանդիսություններին։ ՀՈՒՆԻՍԻ 10-ին, Վեհափառ Հայրապետի ելույթը Մոսկվայում, պետական Օպերային դահլիճում կայացած հանդիսավոր նիստի ժամանակ, վերադարձ Մայր Աթոռ՝ ՀՈՒՆԻՍԻ 13-ին։

ՀՈՒՆԻՍԻ 30. – Ս. Էջմիածնում սկսվում են երկկողմանի բանակցությունները Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունների միջև, «Օրակարգի վրա ունենալով Հայ Եկեղեցու ներքին միությունն ու գործակցությունը

ամրապնդելու անհրաժեշտությունը»։ Վեց նիստերից հետո, պատվիրակությունները ՀՈՒԼԻՍԻ 3-ին, ավարտում են աշխատանքները։

ՕԳՈՍՏՈՍԻ 1. – ՈՒղևորություն Մոսկվա, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Պ.Մ. Դեմիչևի հետ պաշտոնական հանդիպման համար։ Մեկ ժամ տևած հանդիպման ընթացքում քննարկվել են Լեռնային Ղարաբաղի ցավոտ հարցը, ինչպես նաև այլ խնդիրներ «մեր ժողովրդին և հայ եկեղեցուն հուզող»։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Ժողովուրդների միջև կայուն խաղաղությունն ամրապնդելու և ծննդյան ութսունամյակի առթիվ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա. Հայրապետին շնորհվում է ԽՍՀՄ Խաղաղության ֆոնդի Ոսկե Մեդալ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20. – Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա.-ի ծննդյան ութսուն և գահակալության երեսուներեքամյակների առթիվ հանդիսությունների սկիզբը Մայր Աթոռում։ Շնորհավորական հեռագրեր Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենից, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ.-ից, ԽՍՀՄ Կրոնական գործերի խորհրդի նախագահ Կոնստանտին Խարչևից, Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Թեոկտիստից, Բուլղար Օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Մաքսիմից, Քենտրբերիի Արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսիից, ՀԽՍՀ Արտաքին գործերի մինիստր Անատոլի Մկրտչյանից, ՀԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանից և ուրիշներից։ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ին, հանդիսավոր Պատարագ Մայր Տաճարում և հավուր պատշաճի Հայրապետական քարոզ։

Երևան, 1990 թ.